

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումներ



# 201, Հուլիս 2015 թ.

No 201, July 2015

شماره ۲۰۱ مرداد ماه ۱۳۹۴

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արևմտյան Հայաստան.....	14
3- Մփյուռք.....	18
4- Միջազգային.....	21
5- Հասարակական.....	22
6- Մշակույթ.....	24
7- Խոհեր.....	25
8- Գծանկարչություն.....	26
9- Առածանի.....	26

## Պարսկերեն բաժին

1- Հայ գրականություն.....	1-6
---------------------------	-----

← **Չափիկ առաջին էջում՝** Յեդ. ճանաչումներ  
**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը  
 Համար 201, Հուլիս 2015 թ.  
 No. 201, July 2015  
 ماهنامه لویس - شماره ۲۰۱ مرداد ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
 Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան  
 Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com  
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

E-mail : **louys\_monthly@yahoo.com**

Internet : **www.louysonline.com**

**Թերթի Գինը՝** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
 չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

## Լատինամերիկյան խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

Լատինամերիկյան խորհրդարանը հուլիսի 31-ին Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւ է ընդունել:

Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը միաձայն հավանություն է ստացել, միայն մեկ պատգամավոր ձեռնպահ է մնացել քվեարկությունից, հայտնում է **Prensa Armenia-ն**:

«Ուրուգվայն աշխարհում առաջին երկիրն էր, որը 50 տարի առաջ ճանաչեց Ցեղասպանությունը, եւ այսօր մենք վճռականորեն պաշտպանում ենք այս դիրքորոշումը», - հայտարարել է Լատինամերիկյան խորհրդարանի նախագահ Ալֆրեդո Աստին:

ԼԱՄ-ը Լատինական Ամերիկայի երկրների խորհրդարանականների խորհրդատվական մարմինն է: Այն 1964թ. Լիմայում հիմնել են լատինամերիկյան պետությունների ազգային կոնգրեսների ներկայացուցիչները:

## Բելգիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւը

Բելգիայի Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում հուլիսի 23-ին քվեարկությամբ ընդունվել է Հայոց ցեղասպանության մասին բանաձեւը: Բանաձեւին կողմ են քվեարկել Ներկայացուցիչների պալատի 124 անդամներ, դեմ՝ ոչ ոք, 8 պատգամավոր ձեռնպահ է քվեարկել:

Ընդդիմությունը քննադատել է, թե անհրաժեշտ էր ավելի միանշանակ փաստաթուղթ, բայց, հաշվի առնելով, որ վարչապետ Շառլ Միշելը խորհրդարանում ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը, կողմ է քվեարկել:

Ներկայացուցիչների պալատը վերջին օրերին բուն քննարկումներ է արել բանաձեւի վերաբերյալ, պատգամավորները նշել են Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը:

Լսումների ընթացքում նաեւ քննադատություն էր հնչել Բելգիայի ԱԳՆ-ի հասցեին, քանի որ այն ներկայացուցիչներ չէր ուղարկել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին:

Բելգիայի վարչապետ Շառլ Միշելը հուլիսի 18-ին Ներկայացուցիչ պալատում կառավարության անունից ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը: «Կարծում եմ, որ 1915-1917 թվականների ողբերգական իրադարձությունները, որոնք նախաձեռնել է Օսմանյան կայսրության վերջին կառավարությունը, պետք է որակվեն որպես ցեղասպանությունը», - ասել էր Շառլ Միշելը:

Հիշեցնենք, որ Բելգիայի Սենատը 1998 թվականին արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը՝ համապատասխան բանաձեւ ընդունելով:

## Հայաստան

### Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը



Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո նահանգը հունիսի 24-ին ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, եւ ապրիլի 24-ը սահմանել որպէս «Հայոց ցեղասպանության ճանաչման եւ զոհերի հիշատակման օր»:

[«Agencia Prensa Armenia»](#)-ի փոխանցմամբ, օրենքի նախագիծը նահանգային խորհրդարան էր ներկայացրել նահանգապետ Լուիշ Ֆերնանդու Պեժան:

Ռիո դե Ժանեյրոն Բրազիլիայի չորրորդ նահանգն է Պարանա, Սան Պաուլու եւ Սեարա նահանգներից հետո, որը ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը: Ամիսներ առաջ Բրազիլիայի Սենատը Ցեղասպանության ճանաչման բանաձեւ էր ընդունել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Սահմանադրական բարեփոխումների նախագիծը պետք է վերադարձնել Հատուկ հանձնաժողովին. Արամ Սարգսյան



Սահմանադրական բարեփոխումների ներկայիս նախագիծն անհրաժեշտ է վերադարձնել այդ բարեփոխումներով զբաղվող Հատուկ հանձնաժողովին: Այս մասին հուլիսի 28-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը:

Նրա համոզմամբ նախագիծը լուրջ խմբագրական փոփոխությունների կարիք ունի: «Շատ եմ կասկածում, որ Հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը կարողացել է սա, քանի որ նա դժվար թե իրեն նման բան կարողանա թույլ տալ», - նշեց Սարգսյանը:

Նա հավելեց, որ սահմանադրական բարեփոխումները պետք է համապատասխանեն երկրում գործող համակարգի տրամաբանությանը: «Պետք է ուսումնասիրել վրացական փորձը եւ չկրկնել Վրաստանի սխալները: Քանի դեռ այդ ամենը չի եղել,

մենք չենք սկսի փաստաթղթի քննարկումը», - ընդգծեց Արամ Սարգսյանը:

Անդրադառնալով նախագահի լիազորություններին, Դեմոկրատական կուսակցության նախագահը նշեց, որ նախագահի պաշտոնը «նվաստացվել է»:

«Նախագահը վերածվում է լիազորություններից զուրկ անձի, ով միայն հաստատում է ընդունված որոշումները: Ի՞նչ է նշանակում «նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը»: Նախագահը կարող է երաշխավորել, որ Սահմանադրությունը չի խախտվի», - հավելեց Արամ Սարգսյանը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Արթուր Բաղդասարյանի նախաձեռնած «Հայկական վերածնունդ» անընդունելի է համարում Սահմանադրության ներկայացված տարբերակը



Նախօրերին տեղի է ունեցել «Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական միավորման (նախաձեռնողը ՕԵԿ-ն է) կառավարման խորհրդի նիստը, որտեղ անդրադարձ է եղել Սահմանադրության 1-7 գլուխների նախագծի նախնական տարբերակին եւ ներքին կառուցվածքային խնդիրներին վերաբերող հարցերին:

«Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական միավորման մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ նաեւ նշվում է.

«Կառավարման խորհուրդն անընդունելի համարեց սահմանադրական բարեփոխումների ներկայացված տարբերակը, փաստելով, որ այն կհանգեցնի քաղաքական իշխանության մենաշնորհացմանը եւ մեկ քաղաքական ուժի դիկտատուրայի հաստատմանը, ինչը հարիք չէ ժամանակակից եվրոպական չափանիշներին:

Հանրապետության նախագահի ընտրության համակարգը ընտրիչների մեխանիզմով եւ վերջինիս փաստացի խորհրդանշական դերը պետության ռազմավարական կառավարման գործում, որն առաջարկվում է տվյալ նախագծով, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության սոցեւ ծառայած անվատանգային բնույթի լրջագույն մարտահրավերներին:

Տարածաշրջանային լարված զարգացումների եւ ԼՂ հիմնախնդրի չկարգավորվածության պայմաններում անընդունելի է նաեւ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնի բացակայությունը, ինչպես

նաեւ անվտանգության համակարգի կառավարման մեխանիզմի անորոշ եւ երկիմաստ ձեւակերպումները:

Ներկայացված նախագծով ստեղծվելու է իշխանության ճյուղերի միջեւ անհավասարակշռություն եւ բացակայելու են իշխանության ճյուղերի փոխադարձ հակակշիռների եւ գապումների, ժողովրդավարական երկրի համար անհրաժեշտ, մեխանիզմները:

Ազգային ժողովի ընտրությունների երկփուլ համակարգը, որն իր նախադեպը չունի ոչ մի երկրում, ընդդիմադիր կուսակցություններին դուրս է մղելու իրական քաղաքական գործընթացից, իրական քաղաքական կյանքում չեզոքացնելով նրանց մանդատը, ինչը կգրոյացնի քաղաքական որոշումների ընդունման կամ կասեցման գործընթացի վրա ռեալ ազդեցության հնարավորությունը, որը ժամանակակից ժողովրդավարական մեխանիզմների առավել կարեւոր բնութագրիչն է: Արդյունքում, արհեստականորեն փորձ է արվում մի կուսակցությանը սահմանադրորեն ամրագրել գերիշխող դիրք, ինչն անընդունելի է եւ հղի բազմաթիվ բացասական հետեւանքներով:

Խիստ տարակուսելի է Ազգային ժողովի պատգամավորների քանակի վերաբերյալ «առնվազն 101» ձեւակերպումը, ինչը ենթադրում է, թեկուզ տեսականորեն, որ կարող է լինել նաեւ 1101 պատգամավոր: Այսինքն, նշվում է ստորին շեմը, իսկ վերին շեմի սահմանումը, ըստ էության, դառնում է իշխող քաղաքական ուժի մենաշնորհը:

Անընդունելի են նաեւ այն ձեւակերպումները, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կարող են թույլ տալ օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց ընտրվելու եւ ղեկավարելու տեղական ինքնակառավարման մարմինները:

Նախագծում տնտեսական կարգի վերաբերյալ ձեւակերպման մեջ բացակայում են հանրային սեփականության կամ հանրային-մասնավոր սեփականության ձեւերին վերաբերող ձեւակերպումները եւ ամրագրված է սեփականության միայն մեկ ձեւ՝ մասնավոր: Մա նշանակելու է, որ պետությունը չի կարողանալու ունենալ տնտեսական բնույթի որեւէ սեփականություն, չի կարող լինել պետական-մասնավոր տնտեսական համագործակցության արդյունավետ մեխանիզմ եւ պետությունը դուրս է մնալու տնտեսավարման հարաբերություններից: Այս մոտեցումը, հատկապես համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո, չեն պաշտպանում անգամ ծայրահեղ ազատականները: Երկրում սեփականության տարբեր տեսակների (հանրային, մասնավոր, հանրային-մասնավոր) իրավահավասար գոյության չամրագրելը խնդրահարույց է տնտեսական ժողովրդավարության ձեւավորման համար:

Ելնելով վերոշարադրյալից՝ «Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական միավորումը, որն իր մեջ ներառում է 80-ից ավելի քաղաքական եւ

հասարակական կազմակերպություններ, մերժում է սահմանադրական բարեփոխումների ներկայացված նախագիծը եւ մատնանշում, որ ներկայացված փաստաթուղթը լուրջ վտանգներ է պարունակում երկրի երկարաժամկետ ռազմավարական զարգացման տեսանկյունից:

Միաժամանակ արձանագրում ենք, որ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի պաշտոնական գրությունը, որն արձանագրում էր, թե ընդունվել են «Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական միավորման մաս կազմող «Օրինաց երկիր» կուսակցության առաջարկությունները, ըստ էության, ներկայացված նախագծի հետ որեւէ առնչություն չունի եւ իրականում մերժվել են բոլոր սկզբունքային առաջարկությունները՝ չնայած պաշտոնական գրությամբ արձանագրվել է հակառակը:

Նիստում քննարկվեց եւ արձանագրվեց նաեւ երկրում առկա սոցիալ-տնտեսական վատթարացող իրավիճակը, ինչը խթան է հանդիսանում շարունակաբար ահագնացող արտագաղթի համար՝ անմիջականորեն բացասական ազդեցություն ունենալով երկրի երկարաժամկետ, ռազմավարական

պաշտպանունակության վրա:

Անդրադառնալով «Հայկական վերածնունդ» հասարակական-քաղաքական միավորման կազմակերպչական խնդիրներին՝ արձանագրվեց, որ միավորմանը շարունակում են անդամակցել նոր կազմակերպություններ, ինչը շարունակաբար ավելի է ընդլայնում շարքերը: Ելնելով նշվածից կառավարման խորհուրդը, միավորման կառավարումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, որոշեց ստեղծել 15 միություններ եւ 3 հանձնաժողովներ, որոնց գործունեության մասին տեղեկություններ կներկայացվի հաջորդիվ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Ինչպիսի՞ն է ԼՂՀ կառավարության նոր կառուցվածքը. Բակո Սահակյանը օրենքը ստորագրել է



ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հուլիսի 1-ին ստորագրել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ԼՂՀ օրենքը: Համաձայն օրենքի՝ սահմանվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հետեւյալ կառուցվածքը.

- 1) առողջապահության նախարարություն.
- 2) արդարադատության նախարարություն.
- 3) արտաքին գործերի նախարարություն.
- 4) աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն.
- 5) գյուղատնտեսության նախարարություն.
- 6) Էկոնոմիկայի նախարարություն.
- 7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար.
- 8) կրթության, գիտության եւ սպորտի նախարարություն.
- 9) մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն.
- 10) պաշտպանության նախարարություն.
- 11) քաղաքաշինության նախարարություն.
- 12) ֆինանսների նախարարություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր գործում են պետական կառավարման հետեւյալ մարմինները.

- 1) ազգային անվտանգության ծառայություն.
- 2) արտակարգ իրավիճակների պետական ծառայություն.
- 3) շրջակա միջավայրի եւ բնական ռեսուրսների վարչություն.
- 4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## ՀՀ-ում մշակվող հողատարածքները 2010-ին 62% էին, իսկ այս տարի արդեն 74%.

### նախարար



ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այսօր աշխատանքային այցով մեկնել է Շիրակի մարզ՝ դիտարկելու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանիկ այգիների հիմնման պետական ծրագրերի արդյունքները:

Նախարարը Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանի ուղեկցությամբ եղել է Մարմարաշեն համայնքի բնակիչ Կարեն Արշակյանի տնտեսությունում: 2011 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Թամարա Ֆրութ» ընկերության հետ կնքված եռակողմ պայմանագրով ֆերմերը 3 հեկտար ազնվամորու օրգանիկ տնկարկ է հիմնել, անցկացրել է կաթիլային ոռոգման համակարգ: Այժմ բերքատվությունից գոհ է, մեկ հեկտարից մոտ 1,5 տոննա ազնվամորի է ստանում, «Թամարա Ֆրութի» հետ բերքի մթերման 8 տարվա պայմանագիր ունի: Նախարարը գյուղատնտեսին հորդորել է ավելացնել ազնվամորու մշակության տարածքները: Կարեն Արշակյանը նաև ջայլամաբուծությամբ է զբաղվում:

Նույն համայնքի ֆերմեր Ալեքսան Մարկոսյանը ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շահառուներից է, որին այս տարի հատկացվել է 2,1 տոննա աշնանացան ցորենի «վարսա» սորտի էլիտային վերարտադրության սերմացու: Մտացված սերմացուի հաշվին ֆերմերն այս տարի մոտ 7 հեկտարի վրա ցանք է կատարել, բերքից գոհ է, մեկ հեկտարից շուրջ 8 տոննա բերք է ակնկալում:

Նախարար Սերգո Կարապետյանը ցորենի ցանքատարածություններում շրջելուց հետո այցելել է «Գյումրիի սելեկցիոն կայան»: Տնօրեն Ռուբիկ Կարախանյանի տեղեկացմամբ այստեղ 170 հեկտար տարածքի վրա հացահատիկային մշակաբույսներ են աճեցվում, որից 95 հեկտարը կազմում են աշնանացան ցորենի, իսկ 75-ը՝ գարնանացան գարու ցանքատարածությունները: Օգտագործվում են ինչպես տեղական, այնպես էլ ներկրված սորտեր: «Գյումրիի սելեկցիոն կայանի» տնօրենի հավաստմամբ՝ այս տարի նախորդ տարվա համեմատությամբ 20-25 տոկոսով ավել կլինի բերքատվությունը. նախարարի պահանջն է գյուղացիական տնտեսություններին ապահովել բարձր վերարտադրության, որակյալ սերմացուներով:

Զանգվածային լրատվության միջոցների հետ զրույցում ՀՀ գյուղատնտեսության նախարարը գոհունակություն է հայտնել ծրագրերի արդյունքներից՝ շեշտելով, որ այս տարի ցորենի ցանքատարածություններից բարձր երաշխավորված բերք է սպասվում:

«Իրականացվող ծրագրերի շնորհիվ մենք կարողանում ենք նաև երկրում պարենային անվտանգության խնդիր լուծել. եթե ցորենի ինքնաբավության մակարդակը հանրապետությունում 2010 թվականին 33 % էր կազմում, ապա 2014 թվականին այդ ցուցանիշը հասավ 52%-ի, իսկ արդեն 2020 թվականին մենք նպատակ ունենք 65% ինքնաբավություն ապահովել»,-իր խոսքում նշել է գյուղատնտեսության նախարարը:

Նախարարի խոսքով՝ հանրապետությունում մշակվող հողատարածությունները 2010 թվականին կազմում էին 62%, ապա այժմ այդ ցուցանիշը հասել է 74%-ի: Նա նաև հավելել է, որ ընթացիկ տարում արդեն լրացուցիչ մշակվել է մոտ 17 300 հեկտար հող, և դրանով իսկ ընդհանուր վարելահողերի տարածքը հասել է 78%-ի, ընդ որում Շիրակի մարզում մշակվում է ընդհանուր ցանքատարածությունների 84 %-ը, որը լավ ցուցանիշ է:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## ԱՆԱԶԱՌ ԵՎ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԱՈՒԴԻՏԸ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ Է

### Հարցազրույց տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վերահսկիչ պալատի նախկին նախագահ ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆԻ հետ

-Ինչպես հայտնի է, հանրապետության նախագահը առաջարկել է ՀԷՑ-ում միջազգային աուդիտ անցկացնել եւ պարզել, թե որքանով է հիմնավորված էլեկտրաէներգիայի թանկացումը: Ըստ ձեզ՝ աուդիտի



անցկացումը լավագույն է լքն է ստեղծված իրավիճակի համար:



-Հանրապետության նախագահը, կարծում եմ, ճիշտ որոշում է կայացրել՝ միջազգային աուդիտ նախաձեռնելով: Իսկապես մանրակրկիտ աուդիտը հիմա անհրաժեշտություն է եւ, կարծում եմ, ամենալավ էլքն է:

Բայց անհրաժեշտ է, որպեսզի աուդիտը բազմակողմանի լինի: Բանն այն է, որ միջազգային աուդիտորական կազմակերպությունները հիմնականում իրականացնում են հաշվապահական աուդիտ՝ պարզելով, թե միջազգային չափորոշիչներին համապատասխան են կազմվել ընկերության հաշվետվությունները: Օախսերը, շահույթը ճիշտ են գրանցվել եւ հարկային պարտավորությունները լիարժեք են կատարել:

Նման աուդիտը լիարժեքորեն բավարար է միայն այն մասնավոր կազմակերպությունների համար, որոնք մրցակցային դաշտում են գործում: Բայց բավարար չէ պետական կամ ակնհայտ մենաշնորհային դիրք ունեցող կազմակերպությունների համար: Այդպիսի կազմակերպություններում հարկավոր է իրականացնել նաեւ համեմատական եւ արդյունավետության աուդիտ:

Արդյունավետության աուդիտ անցկացնելով՝ հնարավոր կլինի բացահայտել այն ծախսերը, որոնք արվել են ոլորտի կառավարման համար, եւ հասկանալ արդյունավետորեն են դրանք կատարվել, նպաստել են համակարգի զարգացմանը, թե՛ համակարգը դոփել է տեղում:

Համեմատական աուդիտով հարկավոր է որոշել ընկերության իրականացրած գնումները համապատասխանում են շուկայական արժեքներին, թե՛ գերազանցում են: Ըստ այդմ հայտնի կլինի՝ չարաշահումներ եղել են, թե՛ ոչ:

-Ինչ կարելի է ակնկալել աուդիտի արդյունքներից: Ակնհայտ է, որ ՀԷՑ-ն իրոք չարաշահումներ է թույլ տվել, որի համար պարտավորեցնում է վճարել հանրությանը:

-Տրամաբանությունը հուշում է, որ ՀԷՑ-ը սակագնի բարձրացման համար իբրեւ հիմնավորում ներկայացնելով, օրինակ, տարադրամի փոխարժեքը, դա փաստացի որպես պատրվակ է օգտագործել:

Իրոք, 2014թ. վերջին դրամի փոխարժեքը նվազեց 20 տոկոսով, եւ մեկ դոլարի համար այն 410-ից հասավ մինչեւ 475-480-ի սահմաններին: Իսկ քանի որ ՀԷՑ-ն իր հասույթը ստանում է միայն դրամով, բայց սարքավորումները գնում է եւ աշխատավարձերը

գնահատվում է նաեւ տարադրամով, ապա պարտադրված էր սակագնի բարձրացման միջոցով ավելացնել իր հասույթը: Բայց այս պատճառաբանությունը միայն առաջին հայացքից է հիմնավորված թվում:

Բանն այն է, որ 1999 թվականից մինչեւ 2008թ. էլեներգիայի գինը Հայաստանում չի թանկացել: Մինչդեռ 2003թ. դոլարի միջին փոխարժեքը Հայաստանում եղել է 580 դրամ, մինչեւ 2005թ. գերազանցել է 500 դրամը: 2008թ. հասել է 305 դրամի, այսինքն՝ ՀԷՑ-ի եկամուտները մոտ 2 անգամ ավելացել են: Նշենք, որ մինչեւ 2012թ. փոխարժեքը չի գերազանցել 400 դրամը: 2003-2005թթ. ՀԷՑ-ն աշխատել է իր համար ոչ նպաստավոր փոխարժեքով, սակայն այն ժամանակ սակագնի բարձրացման հարց չի բարձրացրել:

Իսկ այսօր, երբ դոլարի փոխարժեքը չի գերազանցում այդ տարիների ցուցիչը եւ մոտ 100 դրամով էլ ցածր է, ՀԷՑ-ը սակագնի վերանայման հայտ է ներկայացնում:

Աուդիտի ժամանակ շատ կարեւոր է փոխարժեքի փոփոխման այս դինամիկան հաշվի առնելը՝ վերջին 10 տարիների ընթացքում եւ ըստ այդմ նաեւ հասկանալ, թե որքանով է ճիշտ մենեջմենթ իրականացրել ընկերությունը. նպաստավոր տարիներին, երբ փոխարժեքը ցածր էր, ինչպես նաեւ սարքավորումներն անհամեմատ էժան էին ազգային արժույթով, ընկերությունը մեծացրել է ներդրումների ծավալը, թե՛ դա թողել է ծանր ժամանակների համար: Միայն մենեջմենթի դեպքում իր կրած կորուստների համար պետք է ընկերությունը պատասխան տա եւ ոչ թե հասարակությունը:

Նախապես լիարժեք հնարավոր չէ կանխատեսել աուդիտի արդյունքները, սակայն հասարակությունը այս դեպքում պետք է հստակ հարցեր առաջադրի եւ պահանջի դրանց պատասխանները:

-Ոմանք չեն հավատում աուդիտի արդյունքներին՝ ասելով, որ դրանով իշխանություններն ընդամենը փափուկ բարձ են դնում հասարակության գլխի տակ:

-Աուդիտի օբյեկտիվությունը կախված է նաեւ հասարակությունից: Նա պետք է հստակեցնի, թե ինչ սպասելիքներ ունի դրանից: Ուստի հստակ հարցեր պետք է դրվեն ու ակնկալվեն դրանց պատասխանները:

Օրինակ, աուդիտի ժամանակ կարեւոր է դիտարկել, թե ՀԷՑ-ը էներգամատակարարներից գնումներ կատարելով՝ արդյոք զուտ սուբյեկտիվ դիրքորոշումներով չի՞ առաջնորդվել՝ ավելի էժան էներգիայի առկայության դեպքում ինչ-ինչ պատճառներով նախապատվությունը տալով թանկ էներգակրին:

Պետք է անպայման համեմատական վերլուծություն կատարվի՝ էլեկտրաէներգիա արտադրողներից ձեռք բերվող հոսանքի մեծածախ գնի եւ սպառողներին առաջարկվող գնի տարբերությունն ինչքա՞ն է կազմում: Արդյոք ՀԷՑ-ն այդտեղ չիմնավորված մեծ ծախսեր չի՞ իրականացնում, եւ այդ ծախսերը չեն՞ գերազանցում բանականության սահմանը:

Հարցադրումները նաև պետք է ուղղված լինեն էներգահամակարգի կառավարմամբ զբաղվող պետական կառույցին: Դա մասնավորապես վերաբերում է էներգակիրների հարցը համակարգված լուծելուն:

Դիցուք, Հայաստանում գազի գինը ԵԱՏՄ անդամ դառնալուց հետո սահմանին դարձավ 165 դոլար, ինչը փոխհատուցեց փոխարժեքի 20 տոկոս տատանումը, եւ գազը բնակչության համար չթանկացավ: Բայց ի տարբերություն բնակչության խոշոր սպառողների, այդ թվում՝ ՋԷԿ-երի համար գազի գինը դոլարով անփոփոխ է մնացել, այսինքն՝ դրամով թանկացել է 20 տոկոսով: Արդյունքում ստացվում է, որ դրա պատճառով ՋԷԿ-ի արտադրած հոսանքն ավելի թանկ է, ինչն էլ վերջնարդյունքում ազդում է հենց հասարակ քաղաքացու գրպանի վրա, որի համար գազի սպառման գինը չի բարձրացվել:

Ուստի եթե մենք հասարակության համար մատակարարվող էներգակիրների հարց ենք լուծում, ապա նպատակահարմար է այդ խնդիրը համակարգված դիտարկել, ոչ թե իրարից անկախ:

Չափազանց կարելու է, որ դիտարկման առարկա լինի նաև էլեկտրաէներգիայի համար սահմանված գինը՝ տարածաշրջանի երկրներում գործող սակագնի համեմատ՝ որքանով է մեր էլեկտրաէներգիան մատչելի հանրությանը մյուս պետություններում մատակարարվող էլեկտրաէներգիայից, եւ եթե այստեղ այն ավելի թանկ է, ապա ի՞նչ հիմնավորումով:

Նաև անպայման անհրաժեշտ է համեմատել, թե ինչ գնով է ՀԷՑ-ը գնում էլեկտրաէներգիան եւ վաճառում սպառողներին, եւ արդյոք այդ տարբերությունը էապես չի՞ գերազանցում տարածաշրջանի երկրների այդ ցուցանիշը:

Աուդիտի հարցադրումները պետք է հստակ լինեն, բացարձակապես թափանցիկ, համացանցում հասանելի, որ հասարակությունը կարողանա իր հարցերի պատասխանները գտնելու անձամբ հետեւել ուսումնասիրություններին եւ դրա արդյունքներին:

Միայն այս պայմանների առաջադրմամբ հնարավոր կլինի հասարակության համար ընդունելի որոշակի լուծումների հասնել, ինչպես նաև ապահովել տնտեսության մրցունակությունը:

**ԹԱԳՈՒՂԻ ԱՍԼԱՆՅԱՆ**

<http://www.armworld.am/detail.php?paperid=5105&pageid=156414&lang=>

## ՍԱԿԱԳՆԻՆ ՊԵՏՔ Է ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

*Թեև հոսանքի նոր սակագնի թեման դեռ գտնվում է հանրային բողոքների կիզակետում, այնուամենայնիվ խնդրի զուտ տնտեսական կողմը եւս օրակարգային է: Համեմայնդեպս այն, որ նախատեսվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության աուդիտ, այդ թվում՝ ռուսական կողմի մասնակցությամբ, արդեն իսկ ակնարկ է, որ տնտեսական հարթակում համակարգի հետ կապված պարզելու դեռ շատ հարցեր կան: Մի խոսքով՝*

*ինչո՞վ է այս իրավիճակը պայմանավորված, եւ դեպի ո՞ւր է գնում այս խորքային պատմությունը, փորձեցինք պարզել ՀՀ վերահսկիչ պալատի հիմնադիր նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆԻՑ:*

Առաջին հերթին իհարկե չի կարելի հաշվի չառնել, որ տեղի է ունեցել դրամի փոխարժեքի նկատելի փոփոխություն, որի արդյունքում բոլոր այն ապրանքատեսակները, որոնք ներկրվում են արտերկից, մոտ քսան տոկոսով թանկացել են: Եվ հաշվի առնելով, որ բաշխիչ համակարգի հասույթը ստացվում է բացառապես դրամով, փոխարժեքային այդ տատանումը չէր կարող իր որոշակի դերը չունենալ. ի վերջո չնոռանանք, որ դեռ ձմռանը Հայաստան ներկրվող գրեթե բոլոր ապրանքները նույն փոխարժեքի պատճառով որոշակիորեն թանկացան:

Ընդ որում՝ փոխարժեքի այդ խնդիրն ազդում է նաև արտադրող կայանների վրա. գազի գինը հայաստանյան սահմանին ԵՏՄ անդամ դառնալուց հետո թեև իջավ մինչև 165 դոլար, բայց դա միայն գազ ներկրողի համար էր փոխարժեքի այդ տատանման հարցը լուծում: Իսկ ահա խոշոր արտադրական սպառողների համար, որոնք սպառում են ամսական 1000 խմ-ից ավելի գազ, գազի գինը մնաց նույնը՝ 277 դոլարին համարժեք դրամ: Այսինքն՝ թեև ՀՀ դրամի փոխարժեքը նվազեց, ՋԷԿ-երի ծախսերը չիջան: Այսինքն՝ կարգավորումը պետք է լինի համակարգված:

Կցանկանայի անդրադառնալ նաև ՀԷՑ-ի հայտարարությանը, ըստ որի՝ 1999-2009թթ. սպառողի համար էլեկտրաէներգիայի գինը չեն փոխել: Բայց չէ՞ որ 2003թ. 1 դոլարի միջին փոխարժեքը եղել է 580 դրամ, 2008թ. դարձել է 305, այսինքն՝ գրեթե երկու անգամ դրամը ամրացել էր, դա նշանակում է որ իրենց դոլարային արտահայտությամբ հասույթը մոտ երկու անգամ աճել էր այդ տարիներին: Ի դեպ՝ դոլարի փոխարժեքը մինչև 2012թ. չգերազանցեց 400 դրամը եւ մինչև հիմա չի գերազանցել 500 դրամ մակարդակը, որով նրանք աշխատում էին մինչև 2005թ.: Եվ այդ իրավիճակը ոչ միայն շատ նպաստավոր էր տարադրամային բարձր եկամուտներ ստանալու, այլ նաև արտասահմանյան արքավորումների ներմուծումը եւս շատ ձեռնտու էր: Այդ իսկ պատճառով գների անփոփոխ լինելը ցցելը, որ գիտեք՝ ինչ կա, մենք սակագինը չենք փոխել երկար տարիներ, եւ դա է պատճառը, որ հիմա այսքան մեծ է փոփոխությունը, այդպես չէ:

- Այնուամենայնիվ՝ հիմա խոսվում է ցանցերում աուդիտ անցկացնելու մասին, հենց որն էլ այդ կարգի բոլոր նրբերանգները կարող է պարզել:

- Աուդիտի անցկացումն անհրաժեշտ է: Տարբերակներից մեկն այն է, որ աուդիտը կարող են համատեղ իրականացվել ՌԴ հաշվիչ պալատը եւ ՀՀ վերահսկիչ պալատը՝ ներգրավելով նաև հանրության լիակատար վստահությունը վայելող ներկայացուցիչների, որպեսզի արդյունքները համոզիչ լինեն բոլորի համար: Սա,

թերեւս, լավագոյն տարբերակը կլինէր, հաշվի առնելով, որ միջազգային աուդիտորական կազմակերպություն հրավիրելու դեպքում կունենանք ընդամենը հաշվապահական աուդիտ: Իսկ նման աուդիտի դեպքում առաջին հերթին նայում են, թե՛ համապատասխանում է հաշվապահությունը միջազգային ստանդարտներին, բոլոր ծախսերը արտացոլված են արդյոք հաշիվներում, թե ոչ, ճիշտ է հաշվարկված հատույթը, եկամուտը եւ շահույթը, հարկային պարտավորությունները: Մինչդէռ, ասենք՝ արդյունավետ է եւ հիմնավորված են արդյոք կառավարիչների չափազանց բարձր աշխատավարձերը, կատարված գնումները համապատասխանում են շուկայական գներին, որպէս կանոն, դրանք չեն գնահատվում: Այսինքն՝ համեմատական կամ արդյունավետության աուդիտ աուդիտորական կազմակերպությունները փաստացի չեն իրականացնում: Մինչդէռ՝ կարեւորագոյն սկզբունքը հետեւյալն է. գնագոյացման համար պետք է հաշվի առնել ոչ թե այն ծախսերը, որոնք արդէն իրականացվել են, այլ այն ծախսերը, որոնք պետք են անհրաժեշտ քանակի էներգիա արտադրելու համար՝ ելնելով դրանում ատոմային, հիդրո եւ ջերմային էլեկտրակէներգիայի արդյունավետ կառուցվածքից: Անշուշտ՝ նախապատվությունը տալով այն կայաններին, որտեղ ծախսերը ցածր են եւ հզորությունը բարձր, հիդրոկայանների համար հաշվի առնելով ոչ թե մեկ չորային տարին, այլ մի քանի տարվա միջին ցուցանիշը եւ այդպէս շարունակ: Սա հիմնարար սկզբունք է էկոնոմիկայում՝ առաջին հերթին հաշվի առնել ոչ թե արդէն իրականացված ծախսերը, այլ անհրաժեշտ ծավալի վերարտադրության համար արդյունավետ ձեւով իրականացվող ծախսերը:

Երկրորդ՝ էներգակիրների գների հիմնախնդիրը պետք է համակարգված եւ միասին լուծել, եւ երրորդ՝ պետք է պարտադիր լիարժեքորեն փոխհատուցել անապահով խավերին: Այդ բոլոր գործոնները հաշվի առնելով է, որ կարող ենք ունենալ ոչ միայն օբյեկտիվ սակագին, այլ նաեւ այդ հիմքի վրա արդյունավետ գործող էներգետիկ համակարգ:

**Ի.Ն.ՆԱ Ա.ՉԱՐՅԱՆ**

[http://iravunk.com/index.php?option=com\\_content&view=article&id=28228:2015-06-30-10-45-01&catid=52:intesutvun&Itemid=116](http://iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=28228:2015-06-30-10-45-01&catid=52:intesutvun&Itemid=116)

## Հայաստանից արտահանվել է 40 053 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն



Ընթացիկ տարում Հայաստանից ընդհանուր առմամբ արդէն արտահանվել է 40 053 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 25 719 տոննայի դիմաց: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը: Այսպէս՝ հուլիսի 6-ի դրությամբ արտահանվել է 14 463 տոննա ծիրան՝ նախորդ ամբողջ տարվա 1791 տոննայի դիմաց: Հայաստանից այսօրվա դրությամբ արտահանվել է 1324 տոննա կեռաս, նախորդ ամբողջ տարվա 370 տոննայի դիմաց: Հայկական կեռասը հիմնականում արտահանվել է Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս, Վրաստան, ԱՄԷ, Շվեյցարիա:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Բակո Սահակյանը ելույթ է ունեցել Մեծ Բրիտանիայի խորհրդարանում



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հուլիսի 8-ին այցելել է Մեծ Բրիտանիայի խորհրդարան եւ այնտեղ հանդես եկել ելույթով: ԼՂՀ նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ իր ելույթում նա անդրադարձել է Արցախի պետականաշինությանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը, աղբբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորմանը եւ պատասխանել բարձրացված հարցերին: Նախագահն ընդգծել է, որ Արցախում Միացյալ Թագավորության հանդեպ տածում են հատուկ վերաբերմունք՝ Մեծ Բրիտանիան դիտարկելով որպէս միջազգային քաղաքականության ազդեցիկ տերություն, որը նաեւ հանդիսանում է ժողովրդավարության ու եվրոպական քաղաքակրթության բնօրրաններից մեկը: Բակո Սահակյանի բնութագրմամբ՝ Արցախը շահագրգռված է խորհրդարանական կապերի խորացման, գիտակրթական եւ մարդասիրական ոլորտներում Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների զարգացման մեջ: Երկրի ղեկավարի խոսքով՝ նման լավատեսությունն առաջին հերթին պայմանավորված է Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Արցախի եւ հայ ժողովրդի անկեղծ ու հավատարիմ բարեկամների առկայությամբ: Հանդիպմանը ներկա են եղել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում



ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Համահայկական խաղերի ջախը վառվել է Վանա լճի Աղթամար կղզում՝ Սուրբ Խաչ եկեղեցում



Հուլիսի 8-13-ն Արեւմտյան Հայաստանում է եղել Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի պատվիրակությունը՝ ՀԽՀԿ նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորությամբ: «Բարով եք եկել Ձեր տուն», «Բարով եք եկել Ձեր հողերը» խոսքերով նրանց է դիմավորել հայոց հնագույն մայրաքաղաք Վանի քաղաքապետ Բեքիր Կայանը: Քաղաքապետարանում պաշտոնական ընդունելության ժամանակ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահը մանրամասն ներկայացրել է մարզական խաղերի պատմությունը, անցած ուղին՝ նշելով, որ այս խաղերի կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ աննախադեպ մեծ՝ մոտ 730 հոգանոց պատվիրակության ժամանումն է Հայաստան՝ Սասուն, Մուշ, Տիգրանակերտ, Վազք, Բիթլիս, Դերսիմ, Մալաթիա, Վան, Մամաթիա եւ Ստամբուլ քաղաքներից:

Իշխան Զաքարյանը տեղեկացրել է նաեւ, որ, ի նշան աշխարհով մեկ սփռված հայերի միասնության, վառվելու է երեք ջահ՝ Արցախ, Սփյուռք եւ Հայրենիք եռամիասնությամբ: Առաջին երկու ջահերն արդեն վառվել են, իսկ երրորդ ջախը ծրագրված է վառել 10-րդ դ. Գագիկ Արծրունու պատվերով Վանա լճի Աղթամար կղզում կառուցված Սուրբ Խաչ եկեղեցում: Վանի քաղաքապետը մեծ պատիվ է համարել իրենց մասնակցությունն այդ նախաձեռնությանը եւ իր պատվիրակությամբ, քաղաքի մշակութային համույթներով ուղեկցել ՀԽՀԿ պատվիրակներին Աղթամար:

Սուրբ Խաչ եկեղեցում «Ակունք» ազգագրական համույթը կատարել է «Հայր Մերը», իսկ րուպեներ անց Իշխան Զաքարյանի, Վանի քաղաքապետի եւ փոխքաղաքապետի պարգած ջախը բոցավառվել է Համահայկական խաղերի գործադիր կոմիտեի անդամներ Ալֆրեդ Հավանի, Վրեժ եւ Ռուլանդ Շառոյանների, ԱԺ պատգամավորներ Հրանտ Բագրատյանի, Արագած Ախոյանի, Արմավիրի քաղաքապետ Ռուբիկ Խլղաթյանի, ԵՊՀ պատմության

ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի եւ ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի՝ եկեղեցում վառված մոմերից: Միջոցառման ավարտին Վանի քաղաքապետը նվերներ է հանձնել պատվիրակության անդամներին եւ սիրով ընդունել Իշխան Զաքարյանի հրավերը՝ ներկա գտնվելու Համահայկական խաղերի բացման արարողությանը: Այնուհետեւ ջախը դեպի Բիթլիս ու Տիգրանակերտ է տարվել Օհանես Օհանյանի կողմից:

Տիգրանակերտ տանող ճանապարհին Հայաստանի պատվիրակությանն ընդունել է Բիթլիսի քաղաքապետ Հուսեին Օլանը: Քաղաքապետը սիրով տեղեկացրել է, որ ամառային խաղերի բացմանն իր գլխավորած պատվիրակությունը կլինի Երեւանում: Հուսեին Օլանը ցավով անդրադարձել է նաեւ 100 տարի առաջ տեղի ունեցածին՝ ասելով, որ իրենք բոլորն էլ մեղավոր են, եւ ժամանակն է պատմությանը նայել ուղիղ աչքերով:

Իշխան Զաքարյանը եւ Հուսեին Օլանը քննարկել են Բիթլիսում դեռեւս կանգուն հայ մեծամուն գրող Վիլյամ Սարոյանի տան վերականգնման եւ այդ փողոցը նրա անունով անվանակոչելու հարցը: Իշխան Զաքարյանը կարեւորել է նաեւ հայկական կիսավեր եկեղեցու վերականգնման խնդիրը եւ մշակութային կապերի ամրապնդումը Հայաստանի տարբեր քաղաքների հետ: Կողմերը պայմանավորվել են այդ հարցերը քննարկել Երեւանյան հանդիպման ժամանակ:

Այնուհետեւ պատվիրակության անդամներն ուղեւորվել են հայոց արքա Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտ, որտեղ նրանց դիմավորել են Տիգրանակերտի քաղաքապետ Ֆըրաթ Անլը եւ Սուրիի քաղաքապետ տիկին Ֆաթմա Շըք Բարաթը՝ «Բարի եկաք Ձեր տուն» կարգախոսի ներքո: Դիմելով հյուրերին՝ Տիգրանակերտի քաղաքապետը կարեւորել է երկու ժողովուրդների մշակութային եւ սպորտային կապերը, խոսել Երեւանում կայանալիք ամառային խաղերին իրենց մասնակցության կարեւորության մասին: Երեկոյան Սուրբ Կիրակոս եկեղեցու բակում կայացել է հայկական պատվիրակության հանդիպումը համայնքի հարյուրավոր ներկայացուցիչների հետ:

Վանից Տիգրանակերտ տարված ջախն ուղեւորվել է Մուշ: Մուշ-Էրզրում ճանապարհին հայկական պատվիրակության անդամները խոնարհվել են հայ ազգային-ազատագրական շարժման հերոս Գեւորգ Չաուշի գերեզմանին: Հայաստանյան պատվիրակության անդամները Մշո վերին թաղի հայկական գերեզմանոցում գտնվող Գ. Չաուշի գերեզմանը ծածկել են հայոց եռագույնով, այնուհետեւ վարդեր նետել Մոլուխի կամրջից Արածանի գետը՝ ի նշան խոնարհումի բոլոր հերոսների առջեւ:

Մշո դաշտից դեպի Էրզրում-Անիի ուղղությամբ ջախը ճանապարհել է Համահայկական խաղերի գործկոմի անդամ Ռուլանդ Շառոյանը:

Անին՝ հայոց հինավուրց մայրաքաղաքը, «գրկաբաց» է ընդունել Համահայկական խաղերի ջախը: Մայր տաճարում հնչել են Անիին նվիրված երգեր:

Կարսից եւ Անիից պատվիրակությունն ուղևորվել է Ջավախք: Համահայկական խաղերի ջահը Ջավախքի Մուրբ Խաչ եղեղեցի է բերել մարզական մեկնաբան Կարեն Գիլոյանը: ՀԽԶԿ պատվիրակությանը դիմավորել են հարյուրավոր ջավախքցիներ: Ջավախքի վարչական շրջանի ղեկավար Համլետ Մովսիսյանը եւ ծունդով ջավախեցի Աշոտ Մելքոնյանը հանդես են եկել ելույթներով եւ կարեւորել միջոցառման էությունը՝ հպարտությամբ նշելով, որ Ջավախքի քաղաքները մեծաքանակ պատվիրակությամբ կմասնակցեն ամառային վեցերորդ խաղերին:

Աղթամարի Մուրբ Խաչ եկեղեցում վառված ջահը Ջավախքից կանցնի Գյումրի, ապա Սարդարապատ եւ Մայր Աթոռ Մուրբ Էջմիածնում ստանալով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ օգոստոսի 2-ին մուտք կգործի Հանրապետական մարզադաշտ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ավետիսյանների սպանության գործը ՌԴ քննչական կոմիտեն հանձնել է ՀՀ քննչականին



Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն այսօր՝ հուլիսի 18-ին, առձեռն ստացել է 2015 թվականի հունվարի 12-ին Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության դեպքի առթիվ ՌԴ քննչական կոմիտեի վարույթում քննված քրեական գործի նյութերը, որին նախորդել էին համատեղ քննարկումներ Երևանում և Գյումրիում:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության քննչական խմբի անդամները ռուս գործընկերների հետ ուսումնասիրել են ՌԴ քննչական կոմիտեի վարույթում քննվող քրեական գործը և համատեղ առանձնացրել Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության քննությանը վերաբերող նյութերը:

Արդյունքում՝ անջատված նյութերը կազմել են 9 հատոր, որոնք այսօր հանձնվել են ՀՀ քննչական կոմիտեին: ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննվող քրեական գործի քննչական խմբի ղեկավարն ստացած նյութերն ուղարկել է թարգմանության:

Հիշեցնենք, որ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015թ. հունվարի 12-ին: Ավետիսյանների ընտանիքից ողջ էր մնացել 6 ամսական Մերյոժա Ավետիսյանը, որը ծանր վնասվածքներով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, որտեղ յոթ օր անց մահացել էր: Ավետիսյանների ընտանիքի 7 անդամի սպանության համար մեղադրվում է Գյումրիի 102-րդ ռուսական ռազմաբազայի ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը: Մինչև

օրս հարազատների համար անհայտ են սպանության պատճառները: Նրանց համար կասկածելի է նաև սպանության մեջ մեղադրվող անձը, արդյոք նա միայնակ է գործել եւ ինչպես է կարողացել միայնակ սպանել ընտանիքի 7 անդամներին: Փետրվարի 3-ին ՀՀ գլխավոր դատախազ Գեորգ Կոստանյանը բողոքի ակցիայի ճնշման ներքո միջնորդությամբ դիմել էր ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Զայկային՝ Գյումրիում հունվարի 12-ին տեղի ունեցած դաժան սպանության դեպքով հարուցված քրեական գործի վարույթը ՀՀ իրավապահներին փոխանցելու հարցով:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Այս տարի ավելի քան 10 անգամ շատ ծիրան է արտահանվել



Ընթացիկ տարում Հայաստանից ընդհանուր առմամբ արդեն արտահանվել է 45 620 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 27 287 տոննայի դիմաց:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են, թե հուլիսի 20-ի դրությամբ արտահանվել է 18 787 տոննա ծիրան՝ նախորդ ամբողջ տարվա 1791 տոննայի դիմաց:

Հայաստանից այսօրվա դրությամբ արտահանվել է 1830 տոննա կեռաս՝ նախորդ ամբողջ տարվա 370 տոննայի դիմաց:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Անև խավիարի արտադրությունը դառնալու է Արցախի տնտեսության շարժիչ ծրագրերից մեկը. վարչապետ



Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը հուլիսի 21-ին շվեյցարահայ գործարար Վարտան Մերմակիսի հետ այցելել է Մարտակերտի շրջան եւ ծանոթացել տնտեսական մի շարք խոշոր ծրագրերի ընթացքին: Թրդի գետի վրա կառուցված եւ վերջին օրերին գործարկված «Թրդի-3»՝ 5 մեգավատ

հզորությամբ փոքր ՀԷԿ-ի պայմաններին ծանոթանալով՝ վարչապետը գոհունակություն է հայտնել կատարված աշխատանքի վերաբերյալ:

«Այս նոր փոքր ՀԷԿ-ը կհամարելի մեր հերթական ձեռքբերումն Արցախի էներգետիկ ինքնաբավության աստիճանը բարձրացնելու ճանապարհին: Ողջունելի է, որ մասնավոր հատվածը մեծապես ընդգրկված է այդ ռազմավարական գործում: Դրա վառ օրինակը Վ. Մերմակիսի նշանակալի մասնակցությունն է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում», - ասել է Ա. Հարությունյանը:

Կառավարության ղեկավարն այցելել է նաև Մատաղիսում գործող՝ սեւ խավիարի արտադրամաս, որը հիմնվել է շվեյցարահայ գործարարի ներդրումով: Ընկերության պատասխանատուները վարչապետին ու սեփականատիրոջն են ներկայացրել կատարված աշխատանքը եւ հետագա ծրագրերը: Ըստ նրանց՝ շաբաթներ առաջ տեղադրվել է առաջին ձկնկիթը, մոտ 3 տարի անց վաճառքի կհանվեն ձկան, իսկ 5 տարի հետո՝ սեւ խավիարի առաջին խմբաքանակները:

«Կառավարության ուշադրությունը սեւեռված է առաջնահերթորեն սահմանամերձ բնակավայրերի զարգացման վրա: Դրա ապացույցներից մեկն այս հավակնոտ ծրագիրն է, որը ոչ միայն ապահովելու է բազմաթիվ աշխատատեղեր հատկապես շրջակա գյուղերի բնակիչների համար, այլ նաև դառնալու է Արցախի տնտեսության շարժիչ ծրագրերից մեկը: Մենք միշտ պատրաստ ենք առավելագույն աջակցություն ցուցաբերել նմանատիպ ձեռնարկումներին, առավել եւս, որ այն օտարերկրյա ներդրման արդյունք է», - շեշտադրել է վարչապետը:

Արայիկ Հարությունյանը շրջայց է կատարել նաև սահմանամերձ Թալիշի դաշտերում, որտեղ «Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության» հիմնադրամն արդի տեխնոլոգիաներով մշակում է գարնանացան մի շարք կուլտուրաներ: Վարչապետը գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների հետ տեղում քննարկել է հիմնադրամի ծրագրի ընթացքին վերաբերող որոշ հարցեր տալով համապատասխան հանձնարարականներ դրա արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Իրանի դեսպան. Կարելի է 100 տոկոսով լուրջ զարգացում սպասել ՀՀ-ի հետ հարաբերություններում



Կարելի է 100 տոկոսով լուրջ զարգացում սպասել Հայաստանի հետ հարաբերություններում: Այս

մասին **NEWS.am**-ի թղթակցի հետ զրույցում նշել է Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ռեյխսին՝ պատասխանելով հարցին, թե ինչ արդյունք կարող է տալ հուլիսի 14-ին Վիեննայում Իրանի եւ «վեցնյակի» միջեւ ձեռք բերված համաձայնագիրը:

Նրա խոսքով, Իրանի շրջափակման վերաբերյալ բոլոր որոշումների վերացումը կպահանջի 6-7 ամիս: Առայժմ չեղյալ են հայտարարվում Իրանի դեմ ընդունված ՄԱԿ-ի բանաձեւերը: «Հույս ունենք, որ մնացած նմանատիպ որոշումներն աստիճանաբար չեղյալ կհայտարարվեն: Վստահ եղեք, որ մեր երկիրը ոչ քիչ առավելություններ ունի, որոնք մենք ուզում ենք առաջարկել մեր հարեւանների հետ հարաբերություններում: Հայաստանի հետ մենք շատ լավ հարաբերություններ ունենք, եւ ոչ մի սահմանափակում դրանց զարգացման համար չկա», - ասել է իրանցի դիվանագետը:

Հիշեցնենք, որ ըստ Իրանի եւ «վեցնյակի» միջեւ ձեռք բերված համաձայնագրի, Իրանը պարտավորվում է կտրուկ նվազեցնել ցածր հարստացված ուրանի պաշարները, ինչպես նաև վերակառուցել Ֆորդոուի ստորգետնյա հարստացուցիչ գործարանը եւ Արաքի ծանր ջրի ռեակտորը, որպեսզի բացառի ռազմական նպատակներով միջուկային նյութերի ստացումը:

Փոխարենը Եվրամիությունը կդադարեցնի նավթային էմբարգոն եւ բանկային պատժամիջոցները: Իրանին հասանելի կլինի նաև Swift էլեկտրոնային բանկային համակարգը: Առեւտրային եւ ֆինանսական պատժամիջոցները կդադարեցնի նաև ԱՄՆ-ն:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Վարչապետն ընդունել է Իրաքյան Քրդստանի պլանավորման նախարարին

16:00, 29.07.2015



Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այսօր ընդունել է Իրաքյան Քրդստանի պլանավորման նախարար Ալի Մինդիին:

Ողջունելով հյուրին՝ վարչապետը համոզմունք է հայտնել, որ նրա այցը նոր թափ կհաղորդի Հայաստանի եւ Իրաքի, մասնավորապես, Իրաքյան Քրդստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Հովիկ Աբրահամյանի խոսքով՝ Հայաստանը կարելու է Քրդստանի հետ երկկողմ կապերի ընդլայնումը, եւ այդ մասին է վկայում նաև մայրաքաղաք Էրբիլում ՀՀ գլխավոր հյուպատոսություն հիմնելու որոշումը:

Ալի Մինդիին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ Քրդստանի վարչապետ



Նեչիրվան Բարզանիի անունից ջերմ ողջույններ եւ բարեմաղթանքներ փոխանցել ՀՀ վարչապետին, կառավարությանը եւ հայ ժողովրդին:

Նա նշել է, որ Քրդստանը շահագրգռված է մեր երկրի հետ հարաբերությունների խորացմամբ, եւ իր այցի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի ներդրումային հնարավորությունները եւ հայ գործընկերների հետ քննարկել գործակցության զարգացման հեռանկարները: Զրուցակիցները գոհունակություն են հայտնել քաղաքական երկխոսության ներկայիս մակարդակից եւ կարելուրել առեւտրատնտեսական կապերի ակտիվացումն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների բացահայտումը: Տնտեսական ներուժի լիարժեք իրացման առումով երկուստեք կարելուրվել է հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի գործունեությունը, հայ եւ քուրդ գործարար շրջանակների միջեւ ուղիղ կապերի հաստատումը, գործարար համաժողովների եւ հանդիպումների կազմակերպումը: Նշվել է, որ միջկառավարական հանձնաժողովի երրորդ նիստը նախատեսվում է անցկացնել 2015 թ. աշնանը Բաղդադում, եւ այն հնարավորություն կտա քննարկել երկկողմ համագործակցության կոնկրետ ուղղություններ եւ կյանքի կոչել գործնական ծրագրեր: Կողմերը նաեւ բարձր են գնահատել փոխհարաբերությունների զարգացման եւ խորացման ուղղությամբ Հայաստանի եւ Իրաքի դեսպանությունների ջանքերը:



Հանդիպման ավարտին վարչապետ Հովիկ Աբրահամյանը Քրդստանի վարչապետ Նեչիրվան Բարզանիին է փոխանցել իր ջերմ ողջույնները:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Կարեն Զւմարիտյանը Իրաքյան Քուրդիստանի նախարարին ներկայացրել է ՀՀ-ում բիզնեսի առանձնահատկությունները

Հուլիսի 29-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Զւմարիտյանն ընդունել է Իրաքյան Քուրդիստանի տարածքային կառավարության պլանավորման նախարար Ալի Սինդին:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Հայաստանի Հանրապետությունում Իրաքի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ղազի Տահիր Խալեդը,

Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Գրիգորյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Սերգեյ Ավետիսյանը, ինչպես նաեւ նախարարության այլ աշխատակիցներ եւ ԱԳՆ ներկայացուցիչ:



Նախարար Զւմարիտյանը, ողջունելով հյուրերին՝ նշել է երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման անհրաժեշտությունը, հատկապես՝ գործարար շրջանակների միջեւ կապերի հաստատումն ու զարգացումը:

Իրաքյան Քուրդիստանի տարածքային կառավարության պլանավորման նախարար Ալի Սինդին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նույնպես կարելուրել է երկու երկրների գործարար համայնքների ներկայացուցիչների միջեւ կապերի հաստատումն ու ամրապնդումը: Նախարար Ալի Սինդին ավելացրել է, որ այս այցը լայն հնարավորություն է ընձեռում՝ ծանոթանալու երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության առկա հնարավորություններին:

Հանդիպման ընթացքում Կարեն Զւմարիտյանը համառոտ ներկայացրել է ՀՀ տնտեսությունը, Հայաստանում տնտեսական գործունեություն ծավալելու առանձնահատկություններն ու առավելությունները, արտաքին առեւտրի բարենպաստ պայմանները, այնուհետեւ խոսել է Հայաստանի Հանրապետությունում գործող ազատ տնտեսական գոտիներում արտադրություն կազմակերպելու հնարավորությունների մասին: Հաշվի առնելով Հայաստանի փորձը ջերմոցային տնտեսությունների, թեթեւ արդյունաբերության, դեղագործության, ջրերի եւ ծխախոտի արտադրության ոլորտներում՝ նախարարն առաջարկել է քննարկել համագործակցության հնարավորությունները նշված ոլորտներում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարն առաջարկել է նաեւ հայ-իրաքյան միջկառավարական հերթական համատեղ նիստի շրջանակներում կազմակերպել գործարար համաժողով:

Հանդիպման ավարտին Իրաքյան Քուրդիստանի տարածքային կառավարության պլանավորման նախարար Ալի Սինդին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Կարեն Զւմարիտյանին հրավիրել է Էրբիլ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*



## Մեկնարկել է «Արեւմտահայերենի և արեւելահայերենի մերձեցման խնդիրներ» թեմայով համաժողովը



Հուլիսի 29-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում մեկնարկել է «Արեւմտահայերենի և արեւելահայերենի մերձեցման խնդիրներ» թեմայով համաժողովը, որն իր աշխատանքները կշարունակի հուլիսի 30-ին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ նա մասնավորապես ասաց. «Համոզված եմ, որ մայրենի լեզվի երկու ճյուղերին նվիրված այս համաժողովն իր նպաստը կբերի մեր լեզվի միասնական զարգացման ու գործառության, պահպանության, կանոնարկման ու գիտական ուսումնասիրության, անաղարտության պահպանության, ուսուցման խնդիրներին վերաբերող նախաձեռնությունների, ծրագրերի, գործողությունների առաջադրման ու իրագործման համար»:

Ցեղասպանության պատճառած անդառնալի վնասներից են նաեւ մեր լեզվական կորուստները, որոնց հաղթահարման ուղղությամբ շատ անելիքներ ունենք:

Անդառնալի կորստի մատնվեցին տասնյակ արեւմտահայ բարբառներ, իր պատմական հայրենիքից և բնականոն զարգացման հնարավորությունից զրկվեց գրական արեւմտահայերենը, որը ծվեն-ծվեն եղած գոյամարտ է մղում աշխարհի չորս ծագերում: Այն մեծ աջակցության կարիք ունի, քանզի Սփյուռքում արեւմտահայերենն ունի հայապահպանական կարեւորագույն գործառույթ: Մայրենին, իրավամբ, տունն է հայի աշխարհի չորս ծագերում:

Անուրանալի են լեզվապահպանության առումով Սփյուռքի կառույցների ջանքերը: Բարձր գնահատանքի է արժանի հատկապես հայ եկեղեցու աջակցությունն այդ հարցում: Հայաստանում ևս աշխատանքներ են ծավալվել արեւմտահայերենի ուսումնասիրման, ուսուցման, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի ստեղծման ասպարեզում: ՀՀ կառավարությունը, ի դեմս Սփյուռքի նախարարության, համագործակցում է Գիտությունների ազգային ակադեմիայի, բուհական հաստատությունների, գիտամշակութային տարբեր կազմակերպությունների հետ՝ արեւմտահայերենի կիրառման ոլորտների ընդլայնման, արեւելահայերենի

և արեւմտահայերենի մերձեցման, հայրենագրված և կորստի մատնված բարբառների նշխարները հավաքելու և ի մի բերելու համար:

Մենք պարտավոր ենք արեւմտահայերենը պահպանել անաղարտ պահել և ապահովել հայերենի միասնական զարգացումը՝ իբրեւ ազգային միասնության պահպանման և պետականության զարգացման կարեւորագույն գործոն»:

Ամփոփելով իր խոսքը՝ նախարար Հրանուշ Հակոբյանը հավելեց. «Ընդհանրապես, մեր նախարարության կողմից տարիներ շարունակ իրականացվող բազում ծրագրեր միտված են նպաստելու Սփյուռքում լեզվապահպանությանը և այդ ճանապարհով՝ ազգապահպանությանը: Այդպիսիք են, օրինակ, «Սփյուռք» ամսառային դպրոց», «Արի տուն», «Էլեկտրոնային գրադարան», «Արեւմտահայերենից արեւելահայերեն և հակառակը փոխարկիչ», «ԱՊՀ երկրների հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցություն», «Հայոց լեզվի ուսուցման հեռուստադպրոց», «Ուսուցիչների գործուղում հեռավոր տարածաշրջաններ», «Արեւմտահայերենին վերաբերող գիտական հետազոտությունների խրախուսում» և այլ ծրագրեր»:

Հարգելի բարեկամներ, նախաձեռնելով այս համաժողովը մենք լիահույս ենք, որ առաջադրված խնդրով մտահոգ գիտնականներդ, մտավորականներդ, մանկավարժներդ հանդես կգաք իրավիճակի վերլուծություններով, դիտարկումներով, առաջարկություններով, որոնք կնպաստեն լեզվապահպանությանն աջակցելու համալիր ծրագրի մշակմանը, Սփյուռքի հետ գիտակրթական կապերի ամրապնդմանը, արեւմտահայերենի դասավանդման, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի և մեթոդների բարեփոխմանը, Հայաստանի Հանրապետությունում արեւմտահայերենի դասավանդման որակական նոր մակարդակի ձեռքբերմանը, հայերենի երկու ճյուղերի համընթաց ու միասնական զարգացման, փոխհարստացման ուղիների մշակմանը»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Մուվարյանը: Նա կարեւորեց համաժողովի դերը հայոց լեզվի երկու ճյուղերի մերձեցմանն առնչվող խնդիրների լուծման գործում և նշեց, որ լեզվի երկու ճյուղերի կանոնակարգումն ու բառաֆոնդի հարստացումը օրախնդիր է, առաջիկայում գործելու է Հայերենի բարձրագույն խորհուրդը, որն իր հերթին կնպաստի այդ խնդիրների լուծմանը: Առկա խնդիրները լուծելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ստեղծվել և գործում է արեւմտահայերենի բաժին:

«Հայոց լեզվի առջև ծառայած մարտահրավերները ցեղասպանությունից 100 տարի անց» զեկուցումով

հանդես եկավ ՀՀ ԳԱԱ չր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը: Նա անդրադարձավ լեզվի երկու ճյուղերի ներկա վիճակին եւ առկա խնդիրներին, ներկայացրեց ցեղասպանության հետեւանքով եւ խորհրդային շրջանում Ադրբեջանում հայկական բարբառների կորստին, լեզվի զարգացման ու երկու ճյուղերի մերձեցման խոչընդոտներին:

Համաժողովը շարունակվում է, գեկուցումներով հանդես կգան Հայաստանի եւ Սփյուռքի անվանի լեզվաբաններ, գրականագետներ, ոլորտի այլ մասնագետներ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Վարչապետը ծանոթացել է Աղձքի պատմական հնավայրերի պեղումների ընթացքին



Վարչապետ Նովիկ Աբրահամյանը հուլիսի 28-ին այցելել է Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի Աղձք համայնք (նախկինում Ձորափ)՝ գյուղի տարածքում գտնվող պատմամշակութային հնավայրերի պեղումների ընթացքին ծանոթանալու նպատակով: Նշենք, որ պեղումներ պարբերաբար կատարվել են, բայց դրանք կիսատ են մնացել, եւ անցած տարի Աղձք այցի շրջանակում ծանոթանալով 4-րդ դարի կառույցների՝ մատուռի, բազիլիկ եկեղեցու, Արշակունյաց թագավորների դամբարանի եւ պեղավայրի վիճակին՝ վարչապետը խոստացել էր ֆինանսական միջոցներ հատկացնել եւ հանձնարարել էր վերակառուցել աշխատանքները:

Արշակունիների դամբարանը պեղած հնագիտական արշավախմբի ղեկավար, հնագետ Հակոբ Միմոնյանը վարչապետին է ներկայացրել պեղումների առաջին փուլում կատարված աշխատանքների արդյունքները, պեղավայրում հայտնաբերված գտածոները եւ հաջորդ փուլերի վերաբերյալ հնագիտական արշավախմբի առաջարկությունները: Լրագրողների հետ ձեպագրույցում Նովիկ Աբրահամյանը նշել է, որ պատմամշակութային ժառանգության պահպանությունը գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում, եւ գործադիրը կշարունակի անհրաժեշտ միջոցներ հատկացնել պեղումները շարունակելու եւ ավարտին հասցնելու համար: Կառավարության ղեկավարը կարեւորել է պատմամշակութային բացառիկ կոթողների պահպանումը եւ արժեւորումը ինչպես մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության, այնպես էլ զբոսաշրջության զարգացման տեսանկյունից: Իր հերթին

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը տեղեկացրել է, որ վարչապետ Նովիկ Աբրահամյանի հանձնարարությամբ մշակվել եւ կառավարություն է ներկայացվել հնագիտության զարգացման ծրագիր, որը ոչ միայն գիտական, այլեւ կրթական կարեւոր նպատակ ունի, այն է՝ ընտրել յուրաքանչյուր շրջանի ամենակարեւոր հուշարձանը, հնավայրը եւ իրականացնել կրթական ու զբոսաշրջային ծրագրեր:

Պատմական Աղձք համայնքի պատմության եւ մշակույթի հուշարձանների ցանկում 2002 թ. ներառվել է 14 հուշարձան, այդ թվում՝ 4-րդ դարում կառուցված Աղձք ճարտարապետական համալիրը, Արշակունյաց թագավորների 364 թ. կառուցված արքայական դամբարանը, 4-րդ դարում կառուցված եկեղեցու մնացորդներ, մ.թ.ա-2-1 հազարամյակի դամբարան, գերեզմանոց եւ այլն:

Աղձք այցի ընթացքում կառավարության ղեկավարը նաեւ զրուցել է համայնքի բնակիչների հետ, ովքեր բարձրացրել են համայնքին վերաբերող հարցեր:



*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Որոնք են նորածիններին տրվող ամենատարածված անունները Հայաստանում

15:18, 31.07.2015

Տարածաշրջան: [Հայաստան](#)

Թեմա: [Հասարակություն](#)



2015թ. առաջին 5 ամիսների տվյալներով՝ Հայաստանում ծնվել է 8148 տղա եւ 7270 աղջիկ: Այս մասին այսօր՝ հուլիսի 31-ին, լրագրողների հետ զրույցում ասաց Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույումջյանը՝ ավելացնելով որ 100 աղջկա հաշվով ծնվել է 113 տղա, իսկ 100 աղջկան, ըստ կենսաբանական միջինի, բաժին է ընկնում 102-106 տղա:

Կարինե Կույումջյանը նշեց, որ նորածիններին տրվող անուններից ամենատարածվածները Նարեն եւ Դավիթն են:

Առաջին հինգ ամիսների տվյալներով՝ աղջիկ երեխաների ամենատարածված անունների թոփ տասնյակը նվազման կարգով այսպիսին է՝ Նարե, Մարի, Մարիա, Անահիտ, Մանե, Միլենա, Մարիամ, Անգելինա, Անի, Էլեն, տղաներինը՝ Դավիթ, Նարեկ, Տիգրան, Հայկ, Ալեքս, Գոռ, Արման, Ալեն, Էրիկ, Արթուր:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Միգրացիայի հետեւանքով Հայաստանի բնակչության թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է



Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը նախորդ տարվա համեմատ նվազել է: Այս մասին այսօր՝ հուլիսի 31-ին, լրագրողների հետ զրույցում հայտնեց Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՕ) Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույումջյանը՝ ավելացնելով, որ բնակչության նվազումն արձանագրվել է միգրացիայի բացասական մնացորդի հետեւանքով:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ բնակչության թիվը 3 մլն 5500 մարդ է՝ ներառյալ հանրապետությունից 1 տարի ժամկետով բացակայողների թիվը: 2014թ. հուլիսի 1-ին արձանագրված 3 մլն. 9800 մարդու համեմատ՝ բնակչության թիվը նվազել է 4300 մարդով:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## «Հայոց աշխարհ». 50 տարում ՀՀ բնակչությունը կրճատվելու է գրեթե մեկ միլիոնով. ՄԱԿ-ի կանխատեսումը



«Հայոց աշխարհ» թերթը գրում է. «Միավորված ազգերի կազմակերպությունը հրապարակել է «Աշխարհի բնակչության հեռանկարներ-2015» ամենամյա զեկույցը,

որում ներկայացված է Երկիր մոլորակի բնակչության ժողովրդագրական դինամիկան մինչև 2100 թվականը:

Հայաստանի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ զեկույցում նշվում է, որ 2015 թվականին Հայաստանի բնակչությունը 3 մլն 18 հազար է, 2030 թվականին այն լինելու է 2 մլն 993 հազար, 2050 թվականին՝ 2 մլն 729 հազար՝ 9,6 % կորստով, իսկ 2100 թվականին՝ 1 մլն 739 հազար մարդ: Ըստ էության, ստացվում է, որ 50 տարում Հայաստանում բնակչությունը կրճատվելու է գրեթե մեկ միլիոնով:

Զեկույցի համաձայն՝ Երկիր մոլորակի բնակչությունը 2100 թվականին հասնելու է 11,213 մլրդ-ի: Հատկանշական է, որ մինչև 2050 թվականը մոլորակի բնակչության աճը ապահովվելու է 9 երկիր՝ Հնդկաստան, Նիգերիա, Պակիստան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Եթովպիա, ԱՄՆ, Բնդոնեզիա, Ուզանդա եւ Տանզանիա:

Ամենաարագ աճող տարածաշրջանը զեկույցի փորձագետները համարել են Աֆրիկան, քանի որ 2100 թվականին այս տարածաշրջանի բնակչության թիվը կրկնապատկվելու է, այն դեպքում, երբ, օրինակ, ըստ կանխատեսումների, Ասիայի բնակչության թվաքանակը նվազելու է՝ 2050 թվականին 5,26 մլրդ-ից 2100-ին այն դառնալու է 4,88 մլրդ մարդ: Աֆրիկայում բնակչության աճի տեմպերով հատկապես աչքի է ընկնելու Նիգերիան»:

*Առավել մանրամասն՝ թերթի այսօրվա համարում*

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## 2015 թվականի սկզբից Հայաստանում 110 հազար տոննա պտուղ են աճեցրել



2015 թվականի սկզբից Հայաստանում 110 հազար տոննա պտուղ են աճեցրել: Այս մասին այսօր՝ հուլիսի 15-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է գյուղատնտեսության փոխնախարար Մամվել Գալստյանը՝ հավելելով, որ այդ ծավալից 86 հազար տոննան բաժին է հասել ծիրանին:

Նրա խոսքով, կորիզային պտուղների համար այս տարին բարձր բերք է խոստանում:

Ծիրանի մեծ բրք է սպասվում բոլոր ավանդական տարածաշրջաններում՝ Արարատյան դաշտում, Վայոց Ձորի մարզում, Արագածոտնի նախալեռներում:

«Նախորդ տարի, եթե հիշում եք, ծիրանի բերքը շատ քիչ էր, իսկ այս տարի հույս ունենք գերազանցել 2013 թվականի ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ բերքի նվազում կարող է լինել միայն դեղձի դեպքում», - հավելել է Գալստյանը:



Հիշեցնենք, որ 2013 թվականին, ըստ վիճակագրի, հանրապետությունում աճեցվել է 88,8 հազար տոննա ծիրան:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## 2015թ. սկզբից Հայաստանում 165 հազար տոննա բանջարեղեն է աճեցվել



2015թ. սկզբից Հայաստանում 165 հազար տոննա բանջարեղեն է աճեցվել: Այս մասին հուլիսի 15-ին լրագրողներին հայտարարել է ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը: Դրանցից մոտ 43 հազարը բաժին է ընկել լոլիկին, հավելեց նա: Ընդհանուր առմամբ 2014թ. հետ համեմատ, ցանքատարածությունները մեծացել են 2.5 հազար հա-ով, որոնցից 950 հա-ն բաժին է հասել լոլիկին: Ցանքերի եւ բերքատվության աճին նպաստել է Գյուղատնտեսության նախարարության՝ հատուկ թակարդների միջոցով լոլիկի եւ կարտոֆիլի ուտիճի խնդիրների լուծումը: «Օրագիրը կշարունակի նաև այս տարի», - հավելեց Գալստյանը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Արևմտյան Հայաստան

### Մուշում ջնջվում է հայկական հետքը



Մշո Քալե թաղամասում գտնվող 1600-ամյա հայկական գերեզմանատունն ավերակի է վերածվել՝ գանձագողերի եւ բարձիթողի վիճակի հետեւանքով: Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, 1915 թ. առաջ հայերի կողմից հոծ բնակեցված Մուշում էին գտնվում 299 եկեղեցի, 94 վանք, 53 ուխտավայր եւ 135 դպրոց, որում ուսանում էին 5,669 սաներ: Տարոնի/Մուշի հայերի համերաշխության, սոցիալական եւ զբոսաշրջության միության նախագահ Հայրեթթին Ասլանը, ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ թուրքական պետության գիտակցաբար վարած քաղաքականության

միջոցով ցանկանում են սույն շրջանում վերացնել հայկական պատմությունը, ընդգծեց, որ ջնջվում է նաև քաղաքի պատմական հիշողությունը:

Ասլանը հայտնելով, որ գերեզմանատունն ունի 1600 տարվա պատմություն, նշեց, թե մի ամբողջ ժողովրդի պատմություն կանգնած է վերանալու վտանգին դեմ հանդիման:

Նա շեշտելով, որ հայկական այբուբենը գրվել է հենց Մուշ քաղաքում, հայտնեց, որ գանձագողերը եւս մեծ վնաս են հասցնում գերեզմանոցներին:

Ասլանը նաև ընդգծելով, որ «հայերի կոտորածից առաջ քրդերն ու հայերը խաղաղ են ապրել այս քաղաքում», ասաց. «Եթե ցանկանում ենք խաղաղության, սիրո եւ հարգանքի մթնոլորտում ապրել, ապա պետք է տեր կանգնեն հայկական պատմությանը»:

Նա նաև հայտնեց, որ այստեղ առկա են նաև այլ հայկական հուշարձաններ, որոնք եւս վերանում են, եւ նշեց. «1915 թ. առաջ 100 հազար բնակչությամբ մի նահանգ եղած Մուշում լեռնոտ շրջաններում անգամ հայերի կողմից ենթակառուցվածքային համակարգեր էին ստեղծվել: Հիմա հայերի եկեղեցիները, վանքերը, դպրոցներն այնքան են ավիրվել, որ գրեթե վերացման եզրին են: Հարկավոր է, որ պետությունն ու քաղաքացիական-հասարակական

կազմակերպությունները նրբազգաց լինեն այս հարցի նկատմամբ: Անհետանում է հազարամյա պատմություն: Եթե սույն կառույցներն ավիրվելու փոխարեն վերանորոգվեն, ապա աշխարհի չորս ծագերից այցելուներ կգան Մուշ, եւ տնտեսական զարգացման հետ մեկտեղ՝ կպահպանվի քաղաքի ինքնությունը»:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Կարսում հայերի որսի մասին հայտարարած թուրք ազգայնականը ճնշումների տակ հրաժարվել է իր խոսքերից



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող հայոց նախկին մայրաքաղաք Անիում Տիգրան Համասյանի համերգից հետո խիստ անհանգստացած Կարսի ազգայնական «Իդեալիստական օջախներ»-ի նախագահ Թուգա Ադըգյուզելի ռասիստական հայտարարությունը մեծ արձագանք է գտել Կարսում:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, ռասիստ-ազգայնամոլ Թուգա Ադըգյուզելի հայտարարությունից հետո նրա դեմ խիստ



հայտարարությունները ստիպել են նրան փորձել հրաժարվել իր խոսքերից: Նա հայտարարել էր, թե իր խոսքերը սխալ են հասկացվել:

Ռասիստ գործչի հայտարարությունից հետո քննադատական հայտարարությամբ էր հանդես եկել «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցության Կարսի նահանգային գրասենյակի նախագահ Օզֆեր Քոչաքը՝ շեշտելով, որ իրավապահները պետք է անմիջապես Ադրցյուզեղի նկատմամբ հետաքննություն սկսեն: «Ադրցյուզեղը սպառնացել է հայերին եւ քրիստոնյաների հանդեպ ատելություն սերմանող հայտարարություն արել, որը քրեորեն հետապնդելի է», - ասել է Օզֆեր Քոչաքը:

Ազգայնամուլ գործչի հայտարարությանն արձագանքել նաև Կարսի նախկին քաղաքապետ Նայիֆ Ալիվեյոզլուն՝ շեշտելով, որ քննադատում է նման ռասիստական հայտարարությունը:

Այս հայտարարությանը արձագանքել է նաև «Ազգայնական շարժում» կուսակցության փոխնախագահ Մեմիհ Յալչընը՝ շեշտելով, որ դա իրենց կուսակցության տեսակետը չէ, այլ անձնական կարծիք է եղել, ինչը հակասում է իրենց կուսակցության սկզբունքներին: «Մեր կուսակցությունը չի կարող լինել այնպիսի հայտարարությունների հետ համակարծիք, որոնք կանհանգստացնեն մեր քաղաքացիներին: Այդ հարցով մենք մեր կուսակցության ներսում միջոցներ կձեռնարկենք», - ասել է ազգայնական գործիչը:

Նշենք, որ Անիում Տիգրան Համասյանի համերկից հետո Կարսի ազգայնական «Իդեալիստական օջախներ»-ի նախագահ Թուգա Ադրցյուզեղը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել էր, թե «այդ» հայերը 1915-ին հարյուրհազարավոր թուրքերի են «ցեղասպանության» ենթարկել եւ զարմանում է, թե հիմա ինչու են եկել համերկ տալիս, այն էլ քահանայի հագուստով: «Թե մենք էլ Կարսի փողոցներում դուրս գա՞նք հայերի որսի», - ասել էր ռասիստ գործիչը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում հայ պատգամավորն առաջին կարեւոր հարցն է լուծել հայերի համար



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության կողմից պատգամավոր ընտրված Գարո Փայլանը առաջին կարեւոր հարցն է լուծել Թուրքիայում ապրող հայերի համար:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Գարո Փայլանը խորհրդարանի նստաշրջանի բացման ժամանակ հանդիպել է Ազգային կրթության նախարար Նաբի Ավջըրի հետ եւ բարձրացրել ազային փոքրամասնությունների ներկայացուցիչներին առանց էթնիկ կողավորման ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաներին դպրոցներ ընդունելու հարցը:

Գարո Փայլանը նախարարին հայտնել է, որ առանց այդ ծածկագրերի դպրոց ընդունվելու համար նոր օրենսդրական նախագծի կարիք չկա եւ միայն որոշում ընդունելը բավարար է:

Այս հանդիպումից հետո Ազգային կրթության նախարարը համապատասխան որոշում է կայացրել, ըստ որի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաները ազգային փոքրամասնությունների պատկանող դպրոցներ կընդունվեն միայն տնօրենին դիմելով:

Նշենք, որ 2 տարի առաջ հայտնի էր դարձել, որ Թուրքիայի հանրապետության ստեղծումից ի վեր, հայերը կրում են գաղտնի ծածկագրեր: Դա հայտնի էր դարձել, երբ Ստամբուլում արմատներին վերադարձած հայ ընտանիքի երեխային չէին ընդունել հայկական դպրոց՝ շեշտելով, թե հայերը կրում են 2 ծածկագիրը, իսկ այդ երեխան չունի ծածկագիր:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Աշխատում են Անին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ ճանաչելու շուրջ



Աշխատանքներ են տարվում ժամանակակից Թուրքիայի Կարս նահանգում գտնվող հնագույն Անի քաղաքի ավերակները ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ ճանաչելու ուղղությամբ: Այս մասին գրում է թուրքական [«Hürriyet Daily News»](http://HurrivetDailyNews) պարբերականը:

Կարսի մշակույթի եւ տուրիզմի հարցերի վարչության պաշտոնյա Հաքան Դողանայն ասել է, որ այդ դեպքում Անին կդառնա 16-րդ օբյեկտը Թուրքիայում, որը

ներառված կլինի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում:

«Նախարարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ին դիմել է փետրվարի 15-ին՝ մանրամասն հաշվետվություն ներկայացնելով Անիի ավերակների մասին, եւ մենք հիմա ժամանակավոր ցանկում ենք: Աշխատանքներ են տարվում՝ այն մշտական ցուցակում ընդգրկելու համար»,- ասել է պաշտոնյան՝ հավելելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ից խումբ կայցելի Կարս՝ վերջնական որոշում կայացնելու համար:

Նշենք, որ Անին միջնադարյան հայկական թագավորության մայրաքաղաքն էր, որի սահմաններում ընդգրկված էին նաև ժամանակակից Հայաստանի մի զգալի մասն ու ժամանակակից Թուրքիայի արեւելքը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում Քրի գավառի հայկական Սուրբ Գեորգ եկեղեցին վերականգնելու որոշում է կայացվել



Թուրքիայի իշխանությունները Բինգյոլ նահանգի Քրի գավառի Չանաքչը գյուղի Սուրբ Գեորգ հայկական եկեղեցին վերականգնելու որոշում են կայացրել:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, Բինգյոլի նահանգապետարանի գրավոր հայտարարության մեջ նշվում է, որ Բինգյոլի ամենահին բնակավայրերից մեկը եղող Քրիում գտնվող Չանաքչը գյուղի եկեղեցին կարճ ժամանակահատվածում վերականգնվելու է՝ Էրզրումի (Կարին-Ակունքի խմբ.) Մշակութային եւ բնական հարստությունների պահպանման շրջանային խորհրդի որոշմամբ:

Վերջնականապես քանդվելու վտանգի տակ գտնվող 250 տարվա Սուրբ Գեորգ եկեղեցին գրեթե ավերակ վիճակում էր: Չանաքչը գյուղի գյուղապետ Մեհմեդ Ասալը, շեշտելով սույն եկեղեցին շտապ վերականգնելու անհրաժեշտության մասին, նահանգապետարանին հայտնել էր, որ այն, չվերանորոգվելու դեպքում, կարող է վնաս հասցնել նաև շրջակա տներին:

Գյուղապետ Մեհմեդ Ասալի մտահոգությունը հաշվի առած Բինգյոլի նահանգապետարանը խնդրի մասին հաղորդել էր Էրզրումի Մշակութային եւ բնական հարստությունների պահպանման շրջանային խորհրդին: Վերջինս էլ եկեղեցին վերականգնելու որոշում է կայացրել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում հայերի հետքերը փնտրող՝ BBC-ի հայ եւ թուրք լրագրողները համատեղ ֆիլմ են նկարահանել



Մեղիա նախաձեռնությունների կենտրոնում այսօր՝ հուլիսի 22-ին, կայացավ BBC-ի լրագրող Լարա Պետրոսյանի նկարահանած «Հիշելով հայկական ջարդերը» (Remembering the Armenian Massacres) վավերագրական ֆիլմի ցուցադրությունը:

Ցեղասպանության 100-ամյակին նվիրված ֆիլմն այս տարվա ապրիլի 24-ին հեռարձակվել էր BBC WORLD NEWS, BBC NEWS CHANNEL, BBC PERSIAN TV հեռուստաալիքներով: Այն նաև ներբեռնվել է BBC-ի թուրքական ծառայության յուրօրյան էջում:

Ֆիլմում Լարա Պետրոսյանը այցելում է Թուրքիա և փորձում Արևմտյան Հայաստանի նախկին հայաշատ քաղաքներում գտնել 100 տարի առաջ այստեղ ապրած հայերի հետքերը:

Լարա Պետրոսյանին միանում է «BBC Թուրքիա»-ի լրագրող Ռենջին Արսլանը, որին նույնպես հուզում է այն հարցը, թե իրականում ինչ է կատարվել հարյուր տարի առաջ իր երկրում ապրող հայերի հետ: Ֆիլմում անդրադարձ է կատարվում նաև իսլամացած հայերին, ովքեր դեռևս ֆիզիկական վտանգից խուսափելու համար թաքցնում են, որ իրենց նախնիները հայեր են եղել: Բացի Էսկիշեիր քաղաքից, որտեղ կատարվել են ֆիլմի հիմնական նկարահանումները, լրագրողներն աշխատել են նաև Վանում, Մուշում, Ստամբուլում և Արարատ լեռան ստորոտին: Ֆիլմը նախապատրաստվել է նկարահանվել է յոթ շաբաթում:

Ֆիլմը անգլերեն է, սակայն հեղինակը պլանավորում է այն թարգմանել նաև հայերեն:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում Խցկոնք համալիրի վերջին եկեղեցին եւս փլուզման եզրին է



Կարս նահանգի Տեկոր գավառում գտնվող 5 եկեղեցիներից կազմված Խցկոնք համալիրը թողնվել է ճակատագրի քմահաճույքին: Տեկորից 5 կմ հեռավորության վրա գտնվող սույն 5 եկեղեցիներից միակ կանգուն մնացածը՝ Սուրբ Սարգիս եկեղեցին, եւս անհետ կորչելու վտանգի տակ է:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, Խցկոնքի Սուրբ Սարգիս եկեղեցին, միջոցներ չձեռնակվելու պարագայում, կարճ ժամանակ անց վերջնականապես կվերանա՝ մյուս 4 եկեղեցիների նման: Գրեթե ախոռի վերածված այս եկեղեցու պատերը փլված են, իսկ քարերը՝ քանդված ու տարված տեղի բնակիչների կողմից, որոշ հատվածներն էլ՝ ավիրված գանձ որոնողների կողմից:

Տեկորում գտնվող այդ 5 եկեղեցիները հետևյալն են՝ Սուրբ Կարապետ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Գրիգոր և Սուրբ Սարգիս: Այս 5 եկեղեցիներն ընդգրկող վանական համալիրը լքվել էր 13-րդ դարում՝ մոնղոլների արշավանքներից հետո: 1878 թ., երբ Կարսի մարզն անցել էր ռուսական տիրապետության տակ, վանական համալիրը վերանորոգվել էր և վերաբացվել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Կուբանի ղեկավարի պաշտոնի համար կայայքարի նաեւ Միխայիլ Աբրահամյանը



Կրասնոդարի երկրամասի նահանգապետի պաշտոնի համար 6 թեկնածու գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր է ներկայացրել: Ընտրական հանձնաժողովից ՏԱՄՍ-ին տեղեկացրել են, որ փաստաթղթեր են ներկայացրել ՌԴԿԴ-ի տարածաշրջանային ղեկավար Նիկոլայ Օսադին,

«Սոցիալական պաշտպանության կուսակցության» նախագահ Վիկտոր Պոնոմարյովը, «Արդար Ռուսաստան»-ի մասնաճյուղի ղեկավար Անդրեյ Ռուդենկոն, ՌԼԲԿ-ի տարածաշրջանային բաժանմունքի համակարգողի պաշտոնակատար Մերգեյ Ֆիսյուկը, ինչպես նաեւ «Ռուսաստանի կոմունիստներ»-ից Միխայիլ Աբրահամյանը: Առաջինը փաստաթղթերը ներկայացրել է արդեն գրանցվել է Բենիամին Կոնդրատեւր:

Կուբանի ղեկավարի պաշտոնի համար թեկնածուների փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետն ավարտվում է հուլիսի 29-ին, մոսկովյան ժամանակով 18:00-ին:

Նահանգապետի ընտրությունները նախանշված են սեպտեմբերի 13-ին: Կուբանի ղեկավարի նախորդ՝ 2004 թվականին կայացած ընտրություններում ձայների 84%-ով հաղթել էր Ալեքսանդր Տկաչովը: Ապրիլին նա ՌԴ գյուղատնտեսության նախարար է նշանակվել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Վանից ոչ հեռու 2700 տարեկան ուրարտական ամրոց են գտել



Ժամանակակից Թուրքիայի Վան նահանգի տարածքում 2700 տարի առաջ կառուցված ուրարտական ամրոցի պատեր են հայտնաբերել: Այս մասին գրում է Anatolia Turk News-ը:

Վանից 38 կմ հեռավորությամբ՝ Այանիս տեղանքում հնագիտական պեղումները սկսվել են դեռեւս 1990 թվականին: Այս տարի հաջողվել է դուրս բերել ամրոցի ճակատամասի ամենագեղեցիկ հատվածները, ինչպես նաեւ տաճարի մասը:

Հնագետների խմբի ղեկավար Մեհմետ Իշիկլիի խոսքով, ամրոցն ավերվել է երկրաշարժի հետեւանքով, ինչին նաեւ հրդեհ է հետեւել:

«Դա մեզ շատ զարմացրեց, քանի որ ամրոցի պատերն ավերվել էին ուժեղ երկրաշարժի հետեւանքով, որը ճարտարապետական կերպարի վրա չեն ազդել: Խոսքը 2011 թվականին Վանում գրանցված 7.2 բալ



ուժգնությանը երկրաշարժի մասին է»,- նշել է գիտնականը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Միլյուրդ

### Թուրքիայից Քոբանի ներխուժած իսլամիստները հային սպանել են որդու աչքի առջև



Վերջին ամիսներին իսլամիստներից ազատագրված Միլիթայի Քոբանի քաղաք վերադարձած խաղաղ բնակչության մեջ են եղել ազգությամբ հայ Հովսեփ Թումայանն ու որդին, սակայն Թուրքիայի տարածքից Քոբանի ներխուժած իսլամիստները երեխայի աչքի առաջ սպանել են հորը:

Թուրքական Radikal-ի թղթակիցը գրուցել է Միլիթայի հետ սահմանակից Թուրքիայում գտնվող փախստականների ճամբարում գտնվող եւ ամիսներ իսլամիստների հարձակման ժամանակ Քոբանիից հեռացած Հակոբ Թումայանի հետ:

Հակոբ Թումայանը պատմել է, որ «Իսլամական պետության» ահաբեկիչների հարձակման հետեւանքով իրենք 9 ամիս առաջ մյուս բնակիչների հետ լքել են Քոբանին:

«Սակայն Քոբանին ազատագրելուց ամիսներ անց որոշեցինք վերադառալ Քոբանի: Իսլամիստների վերջին հարձակումից առաջ եղբայրս որոշեց գնալ տան ու խանութի վիճակը տեսնել: Խանութի մոտ իսլամիստները եղբորս սպանել են որդու աչքի առջև»,-ասել է Հակոբ Թումայանը:

Հոր սպանության ականատես Արամը պատմել է, որ հայրը ասել էր, որ գնում է խանութի վիճակը նայի: Շատ չանցած եւ էլ որոշեցի գնալ խանութ: Երբ հասա խանութի մոտ, 4 հոգի զինված կանգնած էին հորս դիմաց: Նրանցից մեկը զենքը պահեց հորս ուղղությամբ եւ կրակեց: Հայրս ընկավ, արյունը հոսում էր նրա սրտից: Չնայած այդ վիճակին, հայրս բղավեց. «Որդիս, փախի՛ր, սրանք իսլամիստներն են: Եթե ես չփախնեի, ես էլ կսպանվեի: Հայրս թաղվել է Քոբանիում»,-ասել է Արամը: Նշենք, որ հունիսի 25-ին «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման մոտ 100 զինյալներ փոքր

ջոկատներով մտել են Քոբանի եւ միավորվելով սկսել են խաղաղ բնակչության կոտորած իրականացնել: Ականատեսների վկայությամբ՝ իսլամիստների որոշ խմբեր Քոբանի են մտել Թուրքիայից:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Թուրքիայում հայ պատգամավորներին համերաշխություն են հայտնել թուրք մտավորականները



Վերջին օրերին Թուրքիայում ազգայնամոլական շրջանակների կողմից հայ պատգամավորների եւ հայ արվեստագետների նկատմամբ վիրավորական եւ ռասիստական հայտարարություններին դեմ են դուրս եկել թուրք առաջադեմ մտավորականները:

Թուրքական Gercekgundem կայքի փոխանցմամբ՝ «Անկարայի մտքի ազատության» նախաձեռնության կողմից հայտարարություն է տարածվել, որ խիստ քննադատություն է հնչեցվել վերջին շրջանում «Ազգայնական շարժում» կուսակցության մի շարք քաղաքապետների կողմից հայ պատգամավորների եւ համերգներով Թուրքիա մեկնած հայ երաժիշտ Տիգրան Համասյանի հասցեին վիրավորական ու սպառնալից հայտարարությունների կապակցությամբ:

«Անկարայի մտքի ազատության» նախաձեռնության կողմից արված հայտարարության տակ ստորագրել են մոտ երկու հարյուր թուրք մտավորական, արվեստագետ, իրավաբան եւ քաղաքական գործիչ:

Նշենք, որ «Ազգայնական շարժում» կուսակցության անդամ, Ադանայի քաղաքապետը վիրավորել էր խորհրդարան մտած հայ պատգամավորներին՝ փորձելով խաղաղկել Թուրքիայում հասարակաց տների ցանցերի նախկին սեփականատեր Մաթիլդա Մանուկյանի անունը, իսկ Կարսի քաղաքապետը խիստ կատաղել էր այն հանգամանքից, որ հայ երաժիշտը Անիում համերգով է հանդես եկել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Էրդողանին երբեք չեն ներելու հայերին վիրավորելու համար. Թուրքիայի հայ կին պատգամավոր

Երկար տարիներ անց առաջին անգամ Թուրքիայի խորհրդարան անցած հայ կին պատգամավոր Մելինա Դոդանը հայտարարել է, թե երբեք չի ներելու նախագահ Էրդողանին՝ «Կներեք, ինձ նույնիսկ հայ են ասել» բառերի համար:

Թուրքական Sozcu պարբերականի հետ զրույցում ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության կողմից պատգամավոր ընտրված



Մելինա Դողանը հայտարարել է, թե ինքը աշխատելու ոչ միայն հայերի, այլև ազգային փոքրամասնությունների մյուս ներկայացուցիչների համար:



Մելինա Դողանը նշել է, թե Թուրքիայի համար լրջագույն խնդիրներից է այլատյացությունն ու ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդեպ խտրականությունը:

Անդրադառնալով նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից հայերի նկատմամբ վիրավորական արտահայտություններին, Մելինա Դողանը շեշտել է. «Երբ հանդիպեմ Էրդողանին, ասելու եմ. «Կներեք, ես հայ եմ»: Ես Էրդողանի՝ «Կներեք, բայց ինձ նույնիսկ հայ են ասել» արտահայտության համար երբեք չեմ ներելու նրան», -ասել է Մելինա Դողանը:

Նշենք, որ հայուհին ծնվել է 1977-ին, Ստամբուլում: Ամուսնացած է, ունի երկու երեխա: Աշխատում է փաստաբանական գրասենյակում: Հայերենից եւ թուրքերենից բացի տիրապետում է նաև անգլերենին եւ ֆրանսերենին:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայի հայ պատգամավորը դատի է տալու հայերին թիրախ դարձրած ազգայնամուլ գործչին



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության կողմից պատգամավոր ընտրված Գարո Փայլանը խորհրդարանի օրակարգ է տեղափոխվել վերջին օրերին հայերին եւ այլ ազգային ու սեռական փոքրամասնություններին թիրախ դարձնելու փորձերը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, խորհրդարանում կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ Գարո Փայլանը հայտնել է, որ վերջին 15 օրում Թուրքիայում ռասիստական եւ ատելություն սերմանող հայտարարությունների հետ կապված իրավապահ մարմինները որեւէ քայլ չեն ձեռնարկել՝ հիշեցնելով Տիգրան Համասյանի համերգից հետո ազգայնականների տիրաառնչակ հայտարարությունը եւ Ադանայի քաղաքապետի հայտարարությունը խորհրդարան անցած երեք հայ պատգամավորների հետ կապված: Գարո Փայլանը հայտարարել է, թե պատրաստվում է դատական հայց ներկայացնել ազգայնամուլական «Իդեալիստական օջախներ»-ի Կարսի կառույցի ղեկավար Թուգա Ադրգյուզելի նկատմամբ, ով ուղղակի թիրախ է դարձրել հայերին՝ ասելով. «Հիմա Կարսի փողոցներում հայերի որսի դուրս գա՞նք»: «Ատելություն սերմանող եւ հետագայում հանցանքների հիմք հանդիսացող հայտարարությունների հետ կապված կոչ եմ անում դատախազությանը միջոցներ ձեռնարկել», -ասել է հայ պատգամավորը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Ստամբուլի օպերայի եւ բալետի թատրոնի տնօրեն է նշանակվել Գեւորգ Դավիթյանը



Ստամբուլի օպերայի եւ բալետի թատրոնի երգչախմբի ղեկավար Գեւորգ Դավիթյանը նշանակվել է Օպերայի եւ բալետի թատրոնի տնօրեն:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Գեւորգ Դավիթյանը նշանակվել է Օպերայի եւ բալետի թատրոնի տնօրեն, երբ նախկին տնօրենը տարիքի պատճառով անցել է թոշակի:

Գեւորգ Դավիթյանը ծնվել է 1968-ին, Ստամբուլում: 1996-ին ավարտել է Սինան ճարտարապետի անվան համալսարանին կից կոնսերվատորիայի օպերայի բաժինը:

1998-ին հաջող հանձնել է քննությունները եւ ընդունվել Ստամբուլի օպերայի եւ բալետի թատրոնի երգչախմբում որպես մենակատար:

Որպես երգչախմբի ղեկավար եւ մենակատար համերգներով է հանդես եկել աշխարհի մի շարք քաղաքներում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Ստամբուլում վերաբացվելու է Քարթալի Սուրբ Նշան եկեղեցին



Ստամբուլի Քարթալի թաղամասում գտնվող Սուրբ Նշան եկեղեցին վերանորոգումից հետո օգոստոսի 8-ին կբացի իր դռները հավատացյալների առջև: Թուրքիայի [Հայոց պատրիարքության կայքի](#) փոխանցմամբ, նման որոշում էր կայացվել հուլիսի 3-ին՝ եկեղեցու թաղային խորհրդի եւ պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանի հանդիպմանը: Քաղաքից բավական հեռու գտնվող եկեղեցին շուրջ երկու տարի փակ էր վերանորոգման պատճառով: Հանդիպման ընթացքում ատենապետ Հովհաննես Սահակոյուն եւ նրա ընկերները պատմել են, որ եկեղեցու վերանորոգման աշխատանքները ավարտին են հասել եւ Արամ արքեպիսկոպոսին հրավիրել են բացմանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայ կաթողիկե եկեղեցին նոր պատրիարք ունի



Գրիգոր Գաբրյանը, ով մինչեւ 2013թ. ապրիլը Ֆրանսիայի հայ կաթողիկեների եպիսկոպոսն էր, ընտրվել է Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարքի պաշտոնում՝ փոխարինելով վախճանված Ներսես Պետրոս 19-րդին: Այս մասին հայտնում է հայ-ֆրանսիական [Nouvelles d'Arménie](#) ամսագիրը:

Ավելի վաղ [NEWS.am](#)-ը հայտնել էր, որ Լիբանանի հայ կաթողիկե պատրիարքարանի նստավայրում՝ Բզումարի վանքում, հայ կաթողիկե եպիսկոպոսների սինոդ է հրավիրվել՝ հունիսի 25-ին վախճանված Ներսես Պետրոս Թարմունի 19-րդին փոխանորդ ընտրելու համար: Մինոդի ղեկավարն է եղել Փարիզի Սուրբ Խաչի թեմի պատվավոր նախագահ եպիսկոպոս Գրիգոր Գաբրյանը:

## Independent. Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ Սուրբ Ղազարը մեծ կարեւորություն է ստանում



Բրիտանական [TheIndependent](#) թերթի ճանապարհորդությունների սյունակում հայկական սուրբ Ղազար կղզու մասին հոդված է լույս տեսել:

«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ Սուրբ Ղազար կղզին հատուկ նշանակություն է ստանում: Բորտսներով բնակեցված կղզին նվիրվել էր հայ Մխիթար վանականին, որը հալածանքների պատճառով փախել էր Կոստանդնուպոլսից», - ասված է հոդվածում:

Հաղորդվում է, որ անգամ Նապոլեոնը, որը վանքերի հանդեպ սեր չէր տածում, ապշած էր մնացել եւ փրկել էր կղզին ոչնչացումից: Այսօր կղզում ապրում է 12 գիտնական վանական եւ 5 վանական եղբայր, որոնց պահպանությանն է հանձնված 200 000 գիրք, 4.500 հազվագյուտ ձեռագիր եւ էգոտերիկ գանձերի հավաքածուներ:

«Հայկական գանձերի թանգարանում կան հսկայական կտավներ, Բրոնզի դարին պատկանող մետաղական աշխատանքներ, մ.թ.ա. 1-ին դարի ոսկյա դրամներ, Հայաստանի Առաջին Հանրապետության տպագրության նմուշներ եւ 1366թ. կրած՝ Կիլիկյան Հայաստանի Լեւոն 6-րդ Լուսինյան թագավորի թուրը», - պատմում է հեղինակը:

Հոդվածում նշվում է, որ վանքի հոգին պահվում է 3 գրադարաններում՝ հիասքանչ մոնումենտալ գրադարանից, որի գրադարակներում հազվագյուտ եվրոպական հատորներ են պահվում, Բայրոնի սենյակով մինչեւ ձեռագրերի կլոր սրահը, որտեղ պահվում է աշխարհում ամենակարեւոր հայկական ձեռագրերի հավաքածուներից մեկը, այդ թվում՝ 862թ. գրված Աստվածաշունչը: Գրադարանում պահվում են նաեւ վաղ հայերեն թարգմանություններ, օրինակ, Փիլոն Ալեքսանդրիացու, Հեսեդոսի եւ Հովհաննես Ոսկեբերանի ստեղծագործությունները, որոնց բնօրինակները չեն պահպանվել, սակայն վանականները, դրանք թարգմանելով լատիներեն, այդպիսով նոր կյանք հաղորդել այդ գործերին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Միջազգային

Լորդ Էլթոն. Ինչ է մեզ այսօր սովորեցնում հայոց ցեղասպանությունը



Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում քննարկումներ տեղի կունենան, որոնց թեման կլինի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածը, որը վերաբերում է մտքի, խղճի ու կրոնի ազատությանը, որոնք այսօր աշխարհում ոտնահարվում են ամեն քայլափոխի:

Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ Դեվիդ Էլթոնն իր բլոգում գրել է, որ քրիստոնյաների հետապնդումներն այսօր շարունակվում է ամբողջ աշխարհում եւ պետք է հիշել, թե ինչ է մեզ սովորեցնում Հայոց ցեղասպանությունը:

Նրա խոսքով, քրիստոնյաների պարբերաբար հետապնդումները նոր երեւոյթ չեն: Հռոմեական կայսրության ժամանակներում քրիստոնյաներին մահապատժի էին ենթարկում, արշավներ էին կազմակերպվում քրիստոնյա հայերի դեմ, նաեւ Նամիբիայի քրիստոնյաների դեմ (վերջին երկուսը հեղինակը համարում է 20-րդ դարում քրիստոնյաների դեմ իրագործված ցեղասպանություն):

Լորդերի պալատի անդամը հիշեցնում է, որ Հայաստանը քրիստոնեություն է ընդունել դեռեւս 4-րդ դարում եւ արդեն այն ժամանակ հայերը թիրախ են դարձել Հռոմեական կայսրությունում: Նույն հարձակումները շարունակվել են նաեւ 600 տարի անց:

Բացի այդ, լորդ Էլթոնը նշում է, որ հենց Հայոց ցեղասպանությունն ու Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» պատմավեպը կարող են շատ բան սովորեցնել այսօր, երբ քրիստոնյաների հետապնդումները շարունակվում են ողջ աշխարհով մեկ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## «Խոստումը». Ցեղասպանության մասին ֆիլմ նկարահանելու Քրրքորյանի երազանքը կիրականանա



«Tracinda» կորպորացիան, որը պատկանում էր վերջերս մահացած հայտնի հայ մեծահարուստ Քրրք Քրրքորյանին, «Survival Pictures» անվանումով պրոդյուսերական կենտրոն է ստեղծել, որի առաջին ձեռնարկը լինելու է Հայոց ցեղասպանության վերաբերյալ «Խոստումը» վերնագրով ֆիլմի նկարահանումը: Գլխավոր դերում հանդես է գալու Քրիստիան Բեյլը: Այս մասին գրում է [«Asbarez»](#)-ը՝ վկայակոչելով «Variety»-ն:

Քրրքորյանի բազմամյա փաստաբան եւ խոսնակ Փաթրիսիա Գլեյզերը նշել է, որ «Survival Pictures» ընկերությունը ծնվել է Քրրք Քրրքորյանը անկուտում կամքի արդյունքում՝ միջազգային հանրությանը ներկայացնել ներշնչող մարդկային պատմություններ: «Խոստումը» հրաշալի սիրտ պատմություն է, որ դռներ պիտի բացի մարդկային իրավունքների պաշտպանության գործում: Այս ֆիլմը գալիս է իրականացնելու Քրրք Քրրքորյանի երկարամյա երազը. ինքը մեծ բավարարությամբ անձնապես փարված էր ֆիլմի նախապատրաստական եւ դերասանների ընտրության գործին», -ասել է Գլեյզերը:

«Variety»-ի փոխանցմամբ, «Survival Pictures»-ը ներկայացնելու է «մարդկային ոգու անշեջ կրակի, մարդկային դիմադրողականության պատումներ»:

«Խոստումը» ֆիլմի ծախսերը հոգալու է «Survival Pictures» ընկերությունը՝ տնօրինությամբ Էրիք Էսրայելյանի եւ Էնթոնի Մանտեքիսի: «Հոթել Ռուանդա» ֆիլմի բեմադրիչ Թերի Ջորջի եւ Ռաբին Սուքորթի կողմից գրված պատմությունն սկսվում է Օսմանյան կայսրության մայրամուտի օրերին: Աշնանը ծրագրված նկարահանումները պիտի կատարվեն Պորտուգալիայում եւ Կանարյան կղզիներում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am



**Հասարակական**

**ՄՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ**

*Վահրամ Հայկան*  
*«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ*

Հայրենիք-Սփյուռք կապերի կարևոր ոլորտներից է գիտությունը: Կրիտիկական այս ենթակառուցվածքը կոչված է ապահովելու յուրաքանչյուր երկրի զարգացումը: Առանց զարգացման՝ ցանկացած երկիր դատապարտված է լճացման և «գաղութացման» հզոր պետությունների կողմից: Խոսքն առավել ևս վերաբերում է Հայաստանին, որն ունի սահմանափակ տարածք, սահմանափակ բնական հարստություններ, անբարենպաստ աշխարհագրական դիրք (նկատի ունենք դեպի ծով ելքի բացակայությունը), անբարենպաստ քաղաքական միջավայր (շրջափակվածությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից):

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության անկումից հետո տնտեսության, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտների հետ միասին ծանր հարված ստացավ նաև գիտությունը: Դա պայմանավորված էր հետևյալ հիմնական հանգամանքներով.

1. *Գիտության ոլորտի ֆինանսավորման կտրուկ անկում:* Ընդհանուր տնտեսական ճգնաժամը հանգեցրեց նաև պետության կողմից գիտության ոլորտի հատկացումների կտրուկ նվազմանը: Եթե խորհրդային տարիներին Հայաստանում գիտության ոլորտին հատկացվող գումարը կազմում էր մոտ \$600 մլն համարժեք գումար<sup>1</sup>, ապա այժմ այդ գումարը կազմում է մոտ \$25 մլն<sup>2</sup>:

2. *Գիտատար արդյունաբերության քայքայում:* Ընդհանուր տնտեսական անկման համապատկերում քայքայվեցին նաև գիտատար արդյունաբերության շատ ճյուղեր, փակվեցին բարձր տեխնոլոգիական շատ գործարաններ: Արդյունքում՝ նվազեց այդ գիտատար արդյունաբերության ճյուղերի համար համապատասխան հետազոտությունների, ինչպես նաև տեխնոլոգիական գործարաններն անհրաժեշտ բարձրորակ կադրերով (ինժեներներ, ծրագրավորողներ և այլն) ապահովելու անհրաժեշտությունը:

3. *«Ուղեղների արտահոսք»:* Գիտության ոլորտում նկատվող լճացման և կազմալուծման միտումները հանգեցրին նաև մեծ թվով գիտաշխատողների արտագաղթին: Գիտության մեջ «ուղեղների արտահոսք» ասելով նկատի է առնվում նաև գիտաշխատողների մասնագիտական գործունեությունը դադարեցնելը և այլ բնույթի գործունեությամբ զբաղվելը:

4. *Նախկին խորհրդային երկրների հետ գիտական կապերի խզումը:* Նախկին խորհրդային երկրներն ինտեգրված էին ոչ միայն տնտեսապես, քաղաքականապես, ռազմապես, այլ նաև գիտության

ոլորտում: Հայաստանն իր ուրույն տեղն ուներ ԽՍՀՄ գիտության համակարգում և կոչված էր սպասարկելու այդ հսկա կայսրության պահանջները: ԽՍՀՄ անկմամբ մի կողմից խզվեցին գիտական կապերը նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ, մյուս կողմից՝ Հայաստանի գիտությունն այլևս չէր սպասարկում Խորհրդային Միության պահանջները և ստանձնում էր նոր առաքելություն՝ սպասարկել միայն Հայաստանի պահանջները: Գիտության դերի և առաքելության այս կտրուկ փոփոխությունն էլ դարձավ ճգնաժամային երևույթների պատճառ: Դրա հաղթահարման համար անհրաժեշտ է որոշակի ադապտացիոն շրջան՝ նոր իրողություններին հարմարվելու համար, որը դեռևս շարունակվում է:

Ծանր իրավիճակում հայտնված հայրենիքին Սփյուռքը գորավիզ կանգնեց ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլև գիտության բնագավառում, ինչի արժևորմանն էլ նվիրված է սույն հոդվածը: Սփյուռքի ներդրումը Հայաստանի գիտության պահպանման և զարգացման գործում կարելի է դիտարկել երկու հարթությունների մեջ՝ մասնավոր ծրագրեր և ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Մասնավոր ծրագրերը մեկնագամյա կամ անհատական փոքր ծրագրեր են՝ գիտության ասպարեզում այս կամ այն կոնկրետ խնդրի լուծման համար: Ինստիտուցիոնալ մեխանիզմները դրսևորվում են գիտության մեջ շարունակական գործունեություն իրականացնող կառույցների հիմնադրմամբ և գործառնությամբ՝ Հայաստանի գիտության պահպանմանն ու զարգացմանը հիմնարար և տևական նպաստ բերելու համար:

Մասնավոր ծրագրերը հիմնականում հանգում են հետևյալին.

- Գիտական հիմնարկների շենքային պայմանները բարելավելու նպատակով իրականացվող վերանորոգչական աշխատանքներ
- Գիտական հիմնարկներին հետազոտությունների և նորմալ գործառնության համար անհրաժեշտ սարքավորումներով (համակարգչային տեխնիկա, տարբեր սարքավորումներ) տրամադրում
- Առանձին հետազոտությունների ֆինանսավորում
- Հովանավորում առանձին հետազոտությունների արդյունքների հրատարակմանը և այլն:

Մասնավոր ծրագրերը բազմաթիվ են և շարունակվում են առ այսօր: Մեծ է ինչպես սփյուռքյան կառույցների, այնպես էլ առանձին բարերարների ավանդը դրանց իրականացման գործում, որոնց, սակայն, չենք անդրադառնա:

Ավելի նպատակահարմար է կենտրոնանալ ինստիտուցիոնալ մեխանիզմների վրա, որոնք, ինչպես արդեն նշվեց, կոչված են հիմնարար նպաստ բերելու Հայաստանի գիտական ենթակառուցվածքին: Հայաստանի գիտության զարգացմանն աջակցելու համատեքստում Սփյուռքի կողմից ստեղծված ինստիտուցիոնալ կառույցները կարելի է բաժանել երկու մասի.

1. գիտակրթական հաստատություններ
2. գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող կառույցներ:

Հայաստանում Մփյուռքի կողմից գիտակրթական հաստատությունների հիմնման համատեքստում առ այսօր իրականացվել է երկու խոշոր նախագիծ: Առաջինը 1991թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի, իսկ երկրորդը՝ 1993թ. Սևանի թերակղզում Վազգենյան հոգևոր դպրանոցի (Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվամբ) հիմնադրումն է: Հարկ է նշել, որ նման խոշոր նախագծերի իրականացումը ենթադրում է լուրջ ֆինանսական միջոցներ, և պատահական չէ, որ այդ երկու հաստատություններն էլ հիմնվել են Մփյուռքի խոշոր բարեգործական կառույցի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով:

Հայաստանի ամերիկյան համալսարանի<sup>3</sup> հիմնադրմամբ, թերևս, նոր՝ արևմտյան գիտակրթական մշակույթն էր ներմուծվում Հայաստան, որը զգալիորեն նպաստեց այստեղ խորհրդային Միության անկումից հետո նահանջ ապրող գիտակրթական համակարգի պահպանմանն ու զարգացմանը: Համալսարանի հիմնադրմամբ երկրի գիտակրթական հաստատությունների միջև մրցակցությանը նոր թափ հաղորդվեց, ինչը լրացուցիչ խթան հանդիսացավ այդ ոլորտի լճացումը կանխելու և զարգացումն ապահովելու համար: Մրցակցությունն ընթանում էր ոչ միայն և ոչ այնքան հանրապետությունում ավանդաբար գործող և նորաստեղծ գիտակրթական հաստատությունների (ինչպիսին էր, օրինակ, Հայաստանի ամերիկյան համալսարանը), այլև տարբեր գիտակրթական մոդելների (արևմտյան և խորհրդային) միջև:

Հայաստանի ամերիկյան համալսարանը, որը Կալիֆոռնիայի համալսարանի Հայաստանի մասնաճյուղն է, սկզբնական շրջանում իրականացնում էր միայն մագիստրատուրայի ծրագրեր: 2013 թվականից այն որոշ մասնագիտությունների գծով սկսել է իրականացնել նաև բակալավրիատի ծրագրեր: Բուհի զարգացումը ենթադրում է ինչպես նոր կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետներ և այլն) ստեղծում, այնպես էլ ուսումնական աստիճանների ընդլայնում՝ ասպիրանտուրայի հիմնում:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրումն օրինակ եղավ հետագայում այստեղ օտարերկրյա այլ բուհերի հիմնադրման համար, ինչպիսիք են Հայաստանում ֆրանսիական համալսարանը, Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանը, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիան, Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը և այլն, ինչը խթանում է գիտակրթական ոլորտի զարգացումը մեր երկրում՝ բազմազան համալսարանների միջև մրցակցության գործոնի միջոցով:

Ինչ վերաբերում է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցին, ապա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող այս կառույցը հանրապետությունում հոգևոր (կրոնագիտական, աստվածաբանական) և

հայագիտական ոլորտների գիտակրթական նշանավոր կառույցներից մեկն է և համայն հայության համար հոգևոր-էկեղեցական գործիչների պատրաստման դարբնոց<sup>4</sup> է հանդիսանում:

Ինչ վերաբերում է գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող կառույցներին, ապա դրանցից ամենանշանավորը հանրապետության նախագահի մրցանակն է: Այն «...շնորհվում է բնական և տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ֆիզիկայի, բժշկագիտության, արվեստի, գրականության, հումանիտար գիտությունների, մարդասիրական արժեքների տարածմանն ուղղված գործունեության և ծրագրերի բնագավառներում արժեքավոր գործեր և հայտնագործություններ կատարած հեղինակներին»<sup>5</sup>: «Հանրապետության նախագահի մրցանակ» հաստատությունը հիմնվել է 2000թ. «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի կողմից: Մրցանակաբաշխությունն անցկացվում է ամեն տարի՝ մրցութային հիմունքներով, և հաղթողները՝ Հայաստանի լավագույն գիտնականներն ու արվեստի գործիչները, իրենց աշխատանքների համար պարգևատրվում են \$10 հազարին համարժեք դրամի չափով<sup>6</sup>: Հաջորդ ինստիտուցիոնալ կառույցը, որը խրախուսում է հետազոտական և ստեղծագործական աշխատանքները Հայաստանում, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից անցկացվող ամենամյա մրցանակաբաշխությունն է՝ գիտության և մշակույթի ոլորտի լավագույն ստեղծագործությունների համար: Սույն մրցանակաբաշխությունը նույնպես անցկացվում է մրցութային հիմունքներով:

Գիտության ոլորտում անցկացվում է «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթը, որի արդյունքներով մրցանակի են արժանանում ինչպես հումանիտար (պատմություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, արվեստ, լեզու և գրականություն, տնտեսագիտություն, հայագիտություն, ազգագրություն), այնպես էլ բնագիտական (ֆիզիկա, մաթեմատիկա և մեխանիկա, ինֆորմատիկա, տեխնիկական գիտություններ, քիմիա, կենսաբանություն, երկրաբանություն) աշխատանքները: Հաղթողները ստանում են դրամական պարգև: Ի տարբերություն հանրապետության նախագահի մրցանակի՝ սույն մրցանակաբաշխությունը միտված է առավելապես խրախուսելու երիտասարդության շրջանում իրականացվող գիտական հետազոտությունները: Ըստ մրցույթի կանոնների՝ հետազոտությունների հեղինակների տարիքը չպետք է գերազանցի 35-ը<sup>7</sup>:

Վերոհիշյալ երկու կառույցների գործունեությունը ոչ միայն նյութապես աջակցում է հայաստանյան հետազոտողներին, այլև, մրցակցություն առաջացնելով նրանց միջև, աշխուժություն է հաղորդում այդ ոլորտին:

Այսպիսով, Մփյուռքի ավանդը Հայաստանի գիտական ենթակառուցվածքի զարգացման գործում դրսևորվում է ինչպես մասնավոր ծրագրերի, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներով: Ինստիտուցիոնալ մակարդակով Մփյուռքի աջակցությունը հայրենի գիտությանը դրսևորվում է գիտակրթական կառույցների, գիտական հետազոտությունները կանոնավոր կերպով խրախուսող հաստատությունների հիմնման և գործարկման միջոցով: Այդ կառույցների գործառնությունը նվազեցնում է որակյալ գիտական կադրերի արտագաղթը, խթանում տարբեր հետազոտությունները, մրցակցություն առաջացնում գիտական գործունեության ասպարեզում:

ՄՇԱԿՈՒՅԹ

Վեներա Վարդույանի անտիպ ստեղծագործություններից



Ծնվել էմ Լոռի, 1955թ հուլիսի 23-ին, Վիրահայոց լեռնաշղթայի մեղմաթեք լանջին գտնվող ճոճկան գյուղում: Արժանավոր գերդաստանի դուստր եմ: Ավարտել եմ ծննդավայրիս միջնակարգ դպրոցը, ապա Վանաձորի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: Ուսուցչի իմ կենսագրությունը բոլորել է չորրորդ տասնամյակը: Աշխատանքս իմ օագինն է, ընտանիքս իմ փրկության տապանը: Բառի առջև ծնրադիր եմ աղոթողի երկյուղած սիրով: Պոեզիան իմ հոգետունն է: Շուտ եմ տպագրվել մամուլում, ուշ գիրք ունեցել: «Իմ անունը Կին է» ժողովածուս 2006թ. տպագրել ու ինձ են նվիրել պոեզիան գնահատող մարդիկ, գրախոսել է Ռազմիկ Դավոյանը: Տպագրվել եմ «Լոռի, իմ սեր, իմ թախիծ», անթոլոգիայում, չափածո 2013թ և նույն վերտառությամբ՝ արձակ 2014թ գրքում: Պատրաստ է տպագրության «Հոգեշերտեր» ժողովածուս:

\*\*\*

Դու այդ որտե՛ղ ես խարույկ վառելու:  
Դու որտեղից ես բառեր պեղելու,  
Որ դեռ ոչ մեկը չի ասել մեկին:  
Ո՞ր քարափին ես երկար նայելու,  
Ո՞ր կածանով ես վեր բարձրանալու,  
Ձեռքդ մեկնելու գտած միակին:  
Մի թե հեռու է այդ ճանապարհը,  
Որտեղ ապրում են բառերը չասված,  
Որ դեռ ոչ մեկը չի ասել մեկին:

\*\*\*

Իմ մեջ ապրող այսքան կանանցից  
Ինչու դու գտար հենց միայն նրան,  
Ով բառն է ընտրել իր ճակատի գիր,  
Ով սիրտն իր հանել, սովել է նրան:  
Ապրում աչքը փակ լուսնոտի նման,  
Որքան հողին չէ, այնքան՝ երկնքում,  
Մինչ դու մի խարույկ կուզենաս վառել,  
Նա բոց աստղեր է անթեղում հոգում:  
Մինչ դու հայացքդ բարձրացնում ես վեր,  
Նա երկինքներից ներքև է սահում:

Մեկ էլ տեսնում ես նազանքով թեքված  
Վերնաշապիկիդ կոճակն է կարում:

\*\*\*

Այնքա՛ն լուռ էի, այնպե՛ս ներամփոփ,  
Որ ինձ թվում էր՝ չեմ կարող քայլել,  
Որ արմատ ունեմ իմ կանգնած տեղում:  
Ու եթե հանկարծ ես մի պահ շրջվեմ,  
Էլ չեմ տեսնելու՝ քո ափերի մեջ  
Արևի շողը ինչպես է դողում:

\*\*\*

Նույն հոգին ես տալիս ու նույն շունչը, Տե՛ր իմ,  
Եվ նույն դեմքն ես տալիս՝ անմեղ-մեղավորի:  
Նույն վայրերն ես դարձնում փրկող ներկա-անցյալ,  
Սրտին ասում՝ սա է, տեղավորվիր:  
Նույն երկինքն ես տալիս, ու նույն օրը, Տե՛ր իմ,  
Ո՛չ իմ գալն եմ հիշում, ո՛չ գնալս գիտեմ:  
Նույն կարոտն է՝ փխրուն, նույն երագն է՝ թերի,  
Անմեղ-մեղավորիս էլ ես ինչով փրկեմ:

\*\*\*

Միայնությունը հոգու վայելք է,  
Ներդաշնակություն ու փրկության ափ:  
Երբ ես ինձ հետ եմ, ու հոգուս դուռն է  
Թեթև կիսաբաց, ես հյուր եմ գնում  
Ինքս ինձ շուրջով, ինչպես գնում են  
Թանկ ներկայությամբ մի գավաթ  
Միրո գինի ըմպելու, ու ծայր է առնում  
Հոգեշահ գրույցն իր անկեղծությամբ,  
Որին կարոտ եմ, և որին միշտ եմ  
Ես կարոտելու:  
Ինձ հետ գրույցս շատ է երկարում,  
Լույսին եմ տալիս, ինչ ունեմ ներսում:  
Սաղմի պես անմեղ մի գոյություն եմ,  
Ինձ ի՛նչ, թե ով է շչարվում դրսում:  
\*\*\*

Ես քո տիրույթը չեմ մտել, Տե՛ր իմ,  
Իմացողի պես:  
Մի կաթիլն անգամ դեռ չեմ ճանաչել  
Ու կույր եմ կարծես:  
Հոգուս, լոկ հոգուս ճառագայթը տաք  
Ճանաչել է քեզ:  
Լույսիդ տիրություն գնդող կաթիլ եմ  
Չիմացածիդ պես:  
\*\*\*

-Դու որտե՛ղ էիր,- ասաց քամին,-  
Դու որտե՛ղ էիր այսքան ժամանակ,  
Որ ծառերի մեջ սոսափ փնտրեցի,  
Որ ձորերի մեջ ապրեցի մենակ:  
- Դու որտե՛ղ էիր,- ասաց անձրևը,  
Ես քո վարսերը շոյել ուզեցի,  
Ամպերի տաք չուն լցրի ձորերը,  
Երբ քեզ չգտա, ցավից լռեցի:  
-Դու որտե՛ղ էիր,- ասին բառերը,-  
Վաղուց ենք այստեղ, քեզ ենք սպասում,



Քամու հառաչը, անձրևի կանչը  
Քո սրտի միջով միշտ մենք ենք լսում: «Երբ 20 տարեկան էի» շարքից  
\*\*\*

Հետո բառեր կփնտրես, սովորական բառեր՝  
Ասելու համար անսովոր մի բան,  
Որ վաղուց գիտես,  
Բայց արտաբերել չես կարողացել:  
Հետո կտեսնես՝ ինչպես է զարկում քո սիրտը ներսից  
Դեռ չձնվածի լույս անմեղությամբ:  
Այդպես է ծնվում միշտ անսովորը սովորականից:  
Այդպես է սիրտը գտնում իր Աստծուն:  
\*\*\*

Հետո բառեր կփնտրես, սովորական բառեր՝  
Ասելու համար անսովոր մի բան,  
Որ վաղուց գիտես,  
Բայց արտաբերել չես կարողացել:  
Հետո կտեսնես՝ ինչպես է զարկում քո սիրտը ներսից  
Դեռ չձնվածի լույս անմեղությամբ:  
Այդպես է ծնվում միշտ անսովորը սովորականից:  
Այդպես է սիրտը գտնում իր Աստծուն:  
\*\*\*

Ամռանն աստղերը շա՛տ ուշ են հավվում:  
Լուսայգին անգամ ժպտում են նրանք:  
Նրանց հալոցքից սիրտս արթնանում,  
Ուզում է երկինք նետվել որպես վարդ:  
Ցողաժայիտ է եզերքը առվի,  
Գետը խշշում է, կանչում է՝ արի՛:  
Ամռան կարոտը շողեր է հագնում,  
Նոր հույսով գրկում սիրտը աշխարհի:  
\*\*\*

Հողն այս ազնիվ է իբրև որթատունկ,  
Ի՛նչ աստվածներ են զինով գավ զարկել:  
Քարը ճեղքել են նռան պես կարմիր  
Ու նրա հրով երազներ փրկել:  
Նա սիրտ է փխրուն ու կարծր հոգի,,  
Լեռան ծաղիկ է, ոգի՝ աննահանջ,  
Նոր օրվա նման արթնանալ գիտի  
Իր լուսաբացը գտնելուց առաջ:  
Մոգերը հեռվից պիտի որ չգան,  
Նրանք վաղուց են լույսը ավետել:  
Որթատունկն այնքան ազնիվ է ու հին,  
Որ Միտո մեջ է ընձյուղներ նետել...  
\*\*\*

Մեծ քարածայրից սարսուռ է քամում  
Ջրվեժի ցուլուն կաթիլափռոշին:  
Խենթ գահավեժից ոչ ոք չի խմում,  
Հեռվից են փարվում կապույտ մշուշին:  
Բեկվող լույս է նա կոպերիս ներքո:  
Ինքն իր խենթության ծիածանն ունի,  
Արևալույս է հրճվանքիս պահին,  
Գաղտնահամա է, թովչանք է քամում  
Արևի սրտից իրիկնապահին:  
Բեկվող շառաչն այդ կոպերիս ներքո:  
Ինքն իրեն ցած է նետել բարձրերից:,  
Իր սրտում ինքն է կապել ծիածան,

Հերթով խմել է բոլոր գույներից,  
Ու դեռ փնտրում է չեղծված կածան:  
Բեկվող հրաշքն այդ կոպերիս ներքո:  
\*\*\*

Ամենը կանցնի վատ երազի պես:  
Ու ճանապարհն այս կմնա դարձյալ  
Միակ մայրուղին՝ եղածների մեջ:  
Եվ հավատավոր վերվարումների  
Հույսը կարթնանա վերջնականապես  
Ու էլ չի քնի:  
Մեր հողի վրա մեզ կսատարեն  
Մեր աստվածները՝ հայ զարմից սերված,  
Ու պարզաջրված, ցողված բառերի  
Մաքուր տարածքում միշտ լույս կլինի:  
\*\*\*

Ժամանակն արդեն  
Ոչինչ չի հարցնում:  
Ինչը իրենն է,  
Լուռ է վերցնում:  
\*\*\*

Այդպես շիվերն են արևի տենչով բարձրանում երկինք:  
Այդպես արյունն է երակների մեջ ծովեր ակոսում:  
Այդպես հառնում են ցավի խորքերից հանց ծովամրրիկ:  
Այդպես արմատի կարծրացած սրտով սաղարթն է  
հոսում:  
Քնած արյան մեջ այն ո՛վ է տեսել հունդը հարության,  
Հաշտվածը երբ է օրը շուտ տալիս իր ուզածի պես:  
Դուք, որ շիվեր եք, արևի տենչով միշտ բարձրացեք վեր:  
Ես էլ իմ ապրած ու չապրած կյանքը մատաղ կանես ձեզ:  
\*\*\*

Էլ երգ չեմ գրի:  
Կխշամ միայն:  
Կհոսեմ միայն:  
Կթեքվեմ լույսին:  
Բառերն ավելին  
Ասել չեն կարող:  
Նրանք ի՛նչ գիտեն  
Էս կյանքի մասին:  
\*\*\*

Ցավն ու սերը գրկել են, փրկում են իրար:  
Մի օր սերն է շատ խելոք, իսկ ցավը՝ հիմար:  
Մի օր երկունս էլ նստում, չեն գտնում հնար:  
Լուռ նայում են մեկմեկու ու ժպտում իրար:

## Խոհեր

### Մեր Անցած Ճամփան


*Թ. Ղարախանյան Միրակցի*

Պրն. Օնիկ Սահակյանի հետ քաղցեցինք դեպի միջնակարգ դպրոցի գրասենեակը եւ հանդիպեցինք հարգելի Տեսուչ պրն Ջորա Բժշկյանին. թեթևակի ծանոթությունից հետո հարգելի պրն. Օնիկ Սահակյանը պայուսակից հանեց Պարսկական կրթութեան ինստիտուտի պատասանատու՝ պրն. Բիժան Ֆարհանգի նամակը եւ հանձնելով պրն. Ջորա Բժշկեանին, արագորեն անցնելով իմ զինձառայության հաջողությունների գովասանքին, վերջացրեց ասելով. «Այս մեր փոքր եղբայր Ղարախանյանը, շատ հաջող ճանապարհ է անցել եւ մեր

